Գ. ՀԱՍԻՏՅԱՆ

Պարեն Սեւակ

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ

Գ. ՀԱՍՏԻՏՅԱՆ

891.99.092 (Սեռակ)
Հ

Որբեր Սեռակ

Ա 7/108

Հայպետհրատ

Երևան

1959

Գևորգ Հատիտյանի «Ռուբեն Սևակ»-ը գրաքննադատական վերլուծության մի փորձ է, որտեղ երիտասարդ քննադատն աշխատել է վեր հանել արևմտահայ նշանավոր բանաստեղծ Ռուբեն Սևակի կյանքն ու գրական գործունեությունը և նրա տեղն ու դերը հայ գրականության մեջ։

ГЕВОРГ НАЗАРОВИЧ АТИТЯН

РУБЕН СЕВАК

Армянское государственное издательство
(Айпетрат)

Ереван, 1959

ՌՈՒԲԵՆ ՍԵՎԱԿ

Ա.

Ռուբեն Սևակը (Ռուբեն Չիլինկիրյան) ծնվել է 1885 թվականի փետրվարի 15-ին, Պոլսի մոտիկ Սիլիվրի գյուղում։ Նախնական կրթությունն ստացել է տեղի Ասքանազյան դպրոցում, որից հետո երկու տարի հաճախել է Պարտիզակի ամերիկյան վարժարանը, որպես դիշերօթիկ աշակերտ։ 1901 թվականին գնում է Պոլիս և սովորում Պերպերյան վարժարանում։ Ահա այնտեղ երևան են գալիս Սևակի գրական և գիտական հակումները։ 1905 թվականին նա փայլուն կերպով ավարտում է Պերպերյան վարժարանի դասընթացը և այնուհետև մեկնում Լոզան՝ բժշկություն ուսանելու։ Լոզանում, ուսանողության շրջանում, սկսում է գրել և հրատարակվել հայ մամուլում։ Լոզանի բժշկա-

կան համալսարանը նա ավարտում է 1911 թվականին, որից հետո նույն քաղաքի հիվանդանոցներում ծառայում է որպես բժշկի օգնական՝ իր մասնագիտության մեջ խորանալու նպատակով։

1914 թվականին իր կնոջ հետ վերադառնում է Պոլիս և հաստատվում Բերայում՝ վերջնականապես նվիրվելով իրեն այնքան սիրելի գրականության և բժշկության։ Մի տարի չանցած՝ ծագում է առաջին իմպերիալիստական պատերազմը։ Թուրքական իշխանությունը զորակոչում է նրան իբրև զինվորական բժիշկ։ Շատ չանցած՝ մի շարաշուք գիշեր, ձերբակալվում է և արտաքսվում Չանկըր։ Եվ ահա, 1915 թվականին, օգոստոսի 23-ին, Թյունեի ճանապարհին՝ Վարուժանի և ուրիշների հետ խժդժորեն սպանվում է չեթեների կողմից։

Արևմտահայերի ողբերգական վիճակը անխուսափելիորեն պիտի անդրադառնար գրականության մեջ։ Եվ ահա գրողները ապրում են ժողովրդի վիճակով, որոնց մեջ է նաև Ռուբեն Սևակը։ 1910 թվականին հրատարակվում է Սևակի բանաստեղծությունների առաջին գրքույկը՝ «Կարմիր գիրքը» վերնագրով։ Գրքի երեք բաժիններից («Ջարդի խենթը», «Թրքուհին», «Մարդերգություն») առաջին երկուսը նվիրված են Կիլիկյան աղետին։ Առաջին գլուխը՝ «Ջարդի խենթը», բաղկացած է ինը տարբեր մենախոսություններից, որոնք սերտորեն

կապված են իրար՝ մեկը մյուսից բխելով և մեկը մյուսին լրացնելով։ Դրա մեջ («Ջարդի խենթը») ներկայացվում են ջարդի մղձավանջային և ահավոր տեսարաններ։ «Ջարդի խենթը» արհեստական խենթության քղամիդն հագած մտնում է մահվան և արյունի այդ համայնադաշտից ներս և վայրագ ու կատաղի մի քրքիջ է արձակում։

— Էհ, հա՜, հա՜, հա՜, հա՜
Հոս դիակն ուսիս, կմալեմ անա
Ջարդվածներու դաշտին վրա լուռ...
Ջառա՛մ բանանա, դիակդ տխուր
Ինչ ծանր է ուսիս, ինչ ծանր է ուսիս...
Անշուշտ երբ իբր խենթ արտասեցիր գիս
Հայրենի բույնեդ, չի խորհեցար բնավ,
Թե պիտի գայի գտնել բեզ խոնավ
Թաքստոցիդ մեջ խեղդված, շան մը պես,
Իմ պարտս վերջին կատարելու բեզ...
(«Ջարդի խենթը»)

Դա անմարդկային ցավից խելագարված մի դիվային քրքիջ է, որ արձակվում է մեր հույսի և պատրանքների, մեր խելքի և իմաստության վրա, որոնք ընկած են դիտապատ։ Անլուր հեգնանքով հռհռում է խենթը գենքից և պայքարից հեռու փախչող մարդկանց համար, որոնք չարիքի բութ և վայրագ ճիրանների առջև իմաստությունն համարեցին խույս տալ վրեժի պայքարից, հանդիստ կյանքի մեջ սարուկի աներեր համբերությունով կաշկանդված։ Վախկոտ ու վատ հոգիներ, որոնք

անձնապաշտության տիղմի մեջ խրված՝ մեղկ ու անկորով համակերպության տակ հլու, երբեք չկարողացան ազատության դրոշն ունենալ իրենց ձեռքում և մեռնել հերոսաբար: Խենթը իր ցավի, իր կատաղության պոռթկումի տակ քրքջում է այս «ապուշ» կյանքին պնդորեն փարած ստրուկ հոգիների վրա, որոնց համար անձնական ապահովությունից դուրս ամեն ինչ անմտություն է:

— Է՜հ, հա՜, հա՜, հա՜, հա՜
Բոլոր խելացի մարդիկներն անա.
Անա խելոքներն այս ապուշ կյանքին,
Անա անոնք, որ իրենց ծանր հոգին
Համբիչ քաշելով կզրոսցնեին,
Ու նվիրումով մը ասավածային,
Կիրակին անգամ մը բիրանով ծում
Տիրամոր առջև կսպառեին մոմ,
Շարաթ մը ամբողջ, անվախ, աննամար,
Ենալու, ստելու, գողնալու համար:
(«Ջարդի խենթը»)

Վրեժի պայքարի առջև միակ իմաստությունը հեղափոխությունն է: Երբ թշնամին ոչ մի խտիր և տարբերություն չի դնում ժողովրդի խավերի և ազգի անհատների միջև, ապա տատանումները դավաճանություն են: Եվ դժբախտաբար ավելի շատ են տուժում հենց նրանք, ովքեր ներկա դեպքում ավելի խելամիտ են ուզում լինել: Եվ խենթի վայրի քրքիջը չարախինդ ցասումով արձագանքում է թշնամու հելուզակների թրով սպանված մարմին-

ների վրա, որոնք սփռված են «անդրհեղեղյան անտառի մը պես»։

Պառկած, ասված իմ. ու ուշափ ալ կա,
Ու ուշափ ալ կա. մինչև հեռակա
Ճամփաներուն եզրը փռված, կարծես
Անդրհեղեղյան անտառի մը պես։
(«Չարդի խենթը»)

Վերջին հաշվով խենթի քրքիջը, քրքիջ է անողոք նախճիրի ենթարկված հայ ժողովրդի հեղաբարբ բնաջնջի հանդեպ, երբ հարկավոր էր հեղափոխության խոյանքով ալանալ թշնամու վրա, խփել անպատճառ։ Որովհետև պայքարը արդարան է և կշահի այն, ով խփում է։ Դժբախտաբար փատան այն է, որ մեր ազգային ազատագրական պայքարը պարտվեց ծախվելով օտարին։ Դաշնաճան «բարեկամների» խոստումներից մոլորված հայ ժողովուրդը խեղդվեց արյան մեջ։ Բանաստեղծը իրավացիորեն անբան գազաններին ավելի վսեմ և բարձր է դասում, քան թե այն մարդկանց, որոնք իրենց մեր դատին «բարեկամ» հռչակեցին։

— Է՜հ, հա՜, հա՜, հա՜, հա՜,
Լուռ գիշերին մեջ շուներուն անա,
Երախին մեջ — դեռ կյանքով զալարուն
Կլսեմ հարհատ ոսկորներուն...
Բարեկամ շուներ, բարեկամ ձեռքեր,
Բարեկամ լեզվով լափլիզված վերքեր...
Երնեկ, գազաններ անբան... Բայց ինչպես

Սուրացին հեռվի դաշտերը անծիր
Գնդակեն, բոցեն, աչքերնին կարմիր:
(«Ջարդի խենթը»):

Թվում է, թե ցավի և զայրույթի հևքոտ շունչը այս տողերի մեջ խեղդում է բանաստեղծին: Վրեժի զգացումը ծանրանում է սրտի վրա, և մի բուռն ատելությամբ վրեժի պատգամն է քարոզում նա: Հարկավոր է անցնել ըմբոստության և ըմբոստությունից միահամուռ ճակատով՝ «Կարմիր դատաստանի»: Եվ այդ դատաստանը միայն մի արդար հատուցում չէ, այլ գոյության կռվում մի բնական անհրաժեշտություն՝ ընդդեմ այն ջարդարարների, որոնք իրենց անգթությամբ, վրեժով ու զայրույթով լցված մարդիկ են պատրաստում հիմնահատակ քանդելու աշխարհի օրենքները: Դրանց մեջ են որբերը, տառապանքի և զրկանքների մեջ հասակ առած՝ «արյան ու խավարին որդեգրյալներ», որոնք թեև տարիքով փոքր, բայց հոգով մեծ են, և որոնք իրենց անհատակ վշտի խոր կյանքի և մարդու հանդեպ հմայաթափ՝ մարդը իր նմանների համար գազան դտան:

Եվ որոնք մարդու մեջը սրբազան
Ոչինչ գտան, այլ մի վայրագ գազան...
(«Ջարդի խենթը»):

Եվ քանի որ արքաներն ու այս աշխարհի տերերը չկարողացան արյունից ղերծ մնալու իմաստու-

թյունն ունենալ, և նրանց ձեռքերը ոճիրների մեղսակցության մեջ դատապարտված մնացին, հետևաբար, իբրև անհեղի օրենք, իրենց դիակների վրա վրեժի «Կարմիր դատաստանը» պիտի կանգնեցվի։

Զգույշ, այդ նույն նսկա մանուկները մի օր,
Նեխած ոսկրերու վրա բյուրավոր,
Կարմիր դատաստանը պիտի կանգնեն...
Ու շուրս նովերուն նոր կամք, նոր օրեն
Պիտի շեփորեն... ու այն ատեն, վայ,
Վայ բոլոր շնչող էակներուն, վայ։
(«Քարդի խենթը»)

Եվ իրոք՝ տանջանքներին անբանական համակերպությունը չէր վերջապես կյանքի նպատակը, և ոչ էլ հլու հաշտեցումը՝ իմաստնացած հանգստի, այլ չարիքի բարձումը, նրա դաշունահարումն է ապահով երաշխիքը մեր սպասած երջանկության։

Կրսեիր, հայրիկ. դրախտ երթալու
Կարնագույն նամփան ըլլալն է հլու
Հետևող խաչի սուրբ արահետին»։
— Հայր, էն կարն նամփան խանջերն է ֆուրդին,
խանջերն է ֆուրդին։
(«Քարդի խենթը»)

Տեսնում ենք, որ բանաստեղծի համար ավելորդ և նույնիսկ վնասակար են դառնում պայքարի և վրեժի հրամայական պահանջի առջև ղենքից բացի միջոցների այլ ընտրություն։ Եվ երբ կյանքի

իրավունքները ոտնահարված են, մարդկային արժանապատվությունը զգետնված՝ մարդը կքել է արցունքի և արյան հեղեղի տակ մահից հալածված։

Մութը շնչելեն աչքերնիս կուրցած
Ու արյան հոտեն ռնգունքնիս լայն բաց։

Ապա պետք է, որ նա ոտքի կանգնի ատելավառ զայրույթով խփելու և խփվելու.

Ահա մենք կուզանք, ու մենք նզովքն ենք,
Ու խավարի մեջ մրխված տեգը նենգ,
Վրեժներու նիդրան ենք փայփայելի,
Մենք սարսափահար ու սարսափելի...

Սևակի ըմբոստ այս տրամադրությունն ու վրեժի կիրքը ապրելու ձայնն է, կյանքի հրամայականը գոյության այն պայմանների դիմաց, որոնց մեջ ապրում էր հայ ժողովրդի մի մեծ հատվածը։

Գրքի երկրորդ վիպերգը «Թրքուհին» է, թուրք բեկի կողմից առևանգված մի հայուհու պատմությունը։ Սևակն այդ պոեմի մեջ կերտում է «հայածին կույսի» ողբերգական դրաման՝ դժբախտ ճակատագրի սև գույներով խտացրած։ Թուրք բեկի կին դարձած հայուհու եղբայրը հեղափոխական է։ Պոեմի սկզբում աղջիկն իր եղբոր համար ուլունքներից մաղախ է պատրաստում և վրան էլ իր գլխի մազերից իր անվան նշանատառերն է

հյուսում։ Տղան դնում է «զարնելու, մեռնելու»։ Աղջկա առևանդումից հետո, մի օր բեկը իր արշավանքից վերադառնալիս, Թրքուհուն բերում է որպես ավար՝ նրա եղբոր դիակը, խանջերը և մաղախը։ Թրքուհին սարսափում է իրեն ծանոթ առարկաների առջև և խանջերը խլելով բեկի ձեռքից խփում է նրա կրծքին և սպանում նրան և հետո, ինքն էլ անձնասպան է լինում։ Վիլերդի այս սյուժեն մի առիթ է, որ բանաստեղծը այստեղ ևս արծարծի վրեժի և կռվի գաղափարը։ Ըստ մեզ, Թրքուհու այդ ելույթը պոեմի բարոյական միտքն է, որ բանաստեղծը ցանկանում է տալ նման հարիրշտակումների ենթարկված բոլոր հայուհիներին։ Չնայած, որ հեղինակը շատ չի մտահոգվում դեպքերի կապակցությունները, արարքների պատճառաբանությունները հիմնավորել մի ընդհանուր գործողության զարգացմամբ, և հաճախ դրա հետևանքով՝ որոշ պատահարներ առկախ են մնում օդի մեջ, բնական հարց հարուցելով, թե արդյոք մոգական մականո՞վ են դեպքերը գալիս և զուգորդվում միմյանց (աղջկա առևանդումը, բեկի և աղջկա եղբոր հանդիպումը, այս վերջինիս գլխատման պարագաները և այլն)։ Բայց պետք է հասկանալ, որ հեղինակը չի ձգտում իր մտահղացումը տալ մի ընդհանուր սյուժետային գծի զարգացումով, այլ այդ ընդհանուր գիծը հարկավոր է հանել առանձին պահերի և դեպքերի ծնունդ տվող ներ-

քին միասնական վիճակից։ Եվ ի վերջո պոեմի արժանիքը կազմում են ոչ թե կառուցման տեխնիկական այդ կողմերը, այլ ներշնչումի այն վիճակները, որոնցով բանաստեղծը իր ժողովրդի սրտառուչ տրտմություններն է վերապրում։

Պոեմը արժեքավոր է բանաստեղծական սրտի զգայուն կարեկցանքով ժողովրդի ցավի մեջ իջնելու և նրա վշտի հետ միասին ապրելու, նրա տխրությունները բաժանելու զգայնությունով, որը եթե ոչ բանաստեղծական՝ գեթ բանաստեղծին վայել առաքինություն է։ Նա դիմելով հայ աղջկան գոչում է.

Դուն կին, չունիս իսկ այն լույսը ծավի,
Այն ցոլքը հետին, որ սեր կկոչվի,
Դուն արգանդն ես լոկ ծնելու անոնք,
Որ պիտի մեռցվին մանուկ անողոք։
(«Թրքուհին»)

Բանաստեղծը իր հերոսուհու կոնկրետ օրինակի մեջ ողբում է այն բոլոր հայ աղջիկների բախտը, որոնք տարվեցին վայրենի թշնամու ցրտաշունչ վրանները կենսավառելու։

Դուն կույս, դեռ վայրի, դեռ տամ, անապակ,
Դուք, որ թշնամու վրաններուն տակ,
Թափելու կերբամ պուտ մ'արցունքի հետ,
Ամոթապարտ պուտ մ'արյուն անհետ...
(«Թրքուհին»)

Այսպիսով, Սևակը նկարագրելով արյունոտ դեպքեր, գալիս է այն եզրակացության, որ սպանություններն անսահման են, արդարությունը կորսված, և մարդկանց մեջ դերիշխում են վայրենի բնազդներ, ուստի և հարկավոր է լցվել վրեժով։ Բանաստեղծը շեշտում է այն միտքը, թե արժե վրեժի համար ապրել, մոռանալ «սրտի տխրագին վերքերը» և երգել «արդարության ծարավը»։ Վրեժի գաղափարից մահվան առաքյալներ և հսկաներ են ծնվում։ Ահա այդ վրեժի գաղափարին են նվիրված «Կիլիկյան երգեր» վերնագրի տակ «Վրեժին սերմնացանը» և «Վերջին օրոր» բանաստեղծությունները [1]։ Ահա թշնամուց խոշտանգված կինը ընկած է սպանված ամուսնու դիակի վրա։ Իր մանկիկին նա ժառանգ է թողնում Հայաստանը և հոր երկպայրի սուրը («Վերջին օրոր»)։

Հայ ժողովրդի ճակատագիրը հուսահատության և հոռետեսության շղարշով է սքողում Սևակի հոգին։ Ահա այդ հոռետեսությունը, տրտմությունը և մահվան գաղափարը տարածվում են նրա այս շարքի գործերի վրա։ Ահա այս շարքի հոյակապ բանաստեղծություններից մեկը.

Ո՞վ կուլա այսպես խշտյակիս շեմքին.
— Քույր, դարիքն է, բաց...

---

[1] Ռուբեն Սևակ, Երկեր, Երևան, Հայպետհրատ, 1955, էջ 111—112

Կառ մը կանցնի դուրսեն լալագին,
— Սովեն է, դուրդ բաց...
Տապա՞ռն է ջախջախ դռանըս կուրծքին.
— Ջարդն է, դուռդ բաց...
(«Հայաստան»)

Ահա նաև նրա մի շարք բանաստեղծությունները («Ով իմ հայրենիքս», «Ինչպես երբեմն», «Ջանգակներ, զանգակներ»)[1] *որոնցով Սևակը ոգեշնչում է անցած փառքերը՝ հակադրելով դրանք ստրկալուծ ներկային. Սևակն իր բանաստեղծությունների մեջ դրել է ջերմ շունչ, անկեղծ հուզում, մտքի թռիչք, գաղափարական նպատակասլացություն։*

Գիշեր է, բանաստեղծը մենակ քայլում է Լեման լճի ափերով։ Տխուր է նա։ Շրջապատը թովիչ գեղեցկության մեջ երազ ու երջանկություն է շնչում։ Այդ պահին բանաստեղծը երևակայությամբ թռչում է դեպի հայրենիք և Եփրատին, Արաքսին ու Վանա ծովակին հարց է տալիս կարապների, մատաղ կույսերի մասին, որոնք բոցավառեցին ասպետների սրտերը։

Ով դուն, ով դժբախտ երկիր հայրենի,
Որ արյունի տաք, շանմանդաղի մեջ,
Ջոհ գազաններու խաղին վայրենի,

---

[1] *Ռ. Սևակ, Երկեր, Երևան, Հայպետհրատ, 1955, էջ 104, 108, 109*

Ու համայնասպան բոցերու անշնչ,
Կը մրխաս, դժբախտ երկիր հայրենի...
Ով իմ հայրենիս... Ով դուք հեռավոր,
Եփրատ ու Արաքս ու Վանա ծովակ,
Ո՞ւր են կարապները սիրախտավոր,
Որ իրենց երազ բերով հերմակ,
Ճեղքեին կարմիր ձեր կուրծքն ախտավոր:
(«Ով իմ հայրենիս»):

Սրտառուչ և հուզիչ է Սևակի հայրենակարոտ հոգու այս վերհիշումը, և միաժամանակ սրտաճմլիկ՝ որ նա միայն տխուր վայրումներ է լսում.

Պիղծ յաթաղանով ընդկիսված անեղ՝
Կույսերու վայրենն է, որ կլսեմ...:
(«Ով իմ հայրենիս»):

Այս վայրումները՝ հայրենիքի սրտակեղեք պատկերն ու մարդկանց թշվառ վիճակն են պատկերում։ «Հին շքեղ ցեղի» մարտիրոսության ձայնն է, որ հնչում է նրա ականջին։ Սգավոր բանաստեղծը մտքերով թռչում է դեպի հայրենիք, կյանք կոչվող իրականության ահեղ առեղծվածը լուծել չանալով։

Քնարի զառամած բելի մը փարած,
Թալանե, բոցե, հեռու, ան, հեռու,
Քալե դուն, հերքող հայրենահալած,
Հուր, արյուն երգե ազատ լեռներու,
Քնարի զառամած բելի մը փարած...
Քալե մինչ ե՞րբ: Քալե կուրորեն,
Քալե մինչև որ արևն հրակեզ

Իր մարը մտնե նորեն ու նորեն՝
Ու օր մը այլևս չի ծագի քեզ...
Բաբե... Կյա՞նքն է այս... Բալե կուրորեն»։
(«Ով իմ հայրենիքս»)

Սոսկումնալի ու ցավատանջ պատկերների հաջորդական ցուցադրումի միջից քայլում է ընթերցողը բանաստեղծի հետ միասին մերթ ջարդի, մահերի, լափլիզող բոցերի այնքան ներազդող խռովքներից խելագարված, մերթ համակված ամբողջովին նրա անհույս սվայտանքների ծանր ճնշումով, այն ահավոր կործանումով և հիասթափությամբ, երբ այլևս կյանքը նրա աչքերին մի նշանախեցու արժեքն իսկ չունի։

«Ինչպես երբեմն» բանաստեղծությունը միևնույն արամադրության բխումն է։ Այս բանաստեղծությունների հոգեհատակը հայ ժողովրդի թշվառ վիճակն է։ Հաճախ, երբեմնի թագավորության կործանած տոհմից մնացած վերջին շառավիղի նման՝ հետադարձ մի հայացքով, հին օրերի երջանիկ և իշխանական փառքն է ուզում վերապրել ներկայի ահավոր սուգն ու թշվառությունը մոռանալու։

Քերթող, պատմե մեզ հայրենի հուշերդ,
Երգե մեզ հին օրերու երգ մը անհետ,
Թափառական թրուպատուրի երգ մը զով,
Արքշիռ ու զով մեր Գողթանի ողկույզով։

Մեռելի շեն երգ մը հանե թոքերեդ,
Հի՜ն կռապաշտ ա՜յն երգերն որոնց հետ՝

Մեր ասպագեն քաջեր արույր թափորով,
Սաղավարտնին շողացնելով, ջահերով:

Արքայական հանդեսներում վայրաց, վեհ,
Կը պարեին, ասպվածներու պարին պես...
Երգն մեզի հին օրերու հին հուշեր:
(«Ինչպես երբեմն...»)։

Եվ ահա բանաստեղծի վշտահար զգայնությունը հուզում է մեզ իր եղերական տարողության մեջ։

Մենք դարավոր մեր մահացումն այս գիշեր
Պիտի պարենք եղեռնորեն շեն, խելառ...
— Քերթող, ծեր, չրխոսեցավ: Ան կուլար:
(«Ինչպես երբեմն...»)։

А 108

Հայ ժողովրդի ծանր տառապանքը հուսահատ և կսկծալի վիճակի է դատապարտել բանաստեղծին։ Ապրելու անվճռական տենչանքով՝ նա ընդվզում է և իր գոյության իրավունքը պահանջում։ «Զանգակներ, զանգակներ» բանաստեղծությունը պայքարի և բողոքի արձագանք է ժողովրդի հավատքի և նրան վարձահատույց աստծո հանդեպ։ Բանաստեղծին տանջում է իր ժողովրդի ճակատագիրը։ Աստծո համար զոհված հայ ժողովուրդը նրա ողորմությանը չարժանացավ։ Ահա քերթվածը իր ամբողջության մեջ այս կսկծի արտահայտությունն է։

Ախ, որովհետև տեսամ ծեր բարձրեն,
Հավտավորներ հազարով, բյուրով,
Ինկած հեթանոս տապարով, սիրով —
Ձեր ոտքերուն տակ, երկրպագածորեն...

ՀՍՍՀ ԳԱ ԳՐԱԴԱՐԱՆ

Ու ձեր գմբեթեն դիտեցիք անձայն,
Թե ինչպես խենթոտ տանջարներու մեջ.
Որ կին, ծերունի, բոցերով անշեջ,
Իրենց աստծուն զանին զոհվեցան:

Բայց... գիտեք նաև մեր դարավոր
Դիակներու բուրգը ամպերն անցավ,
Ու մեր արյունի ժանրեն նեխեցավ
Սրբությունների ծույլ զունտն երկնավոր.

Արդ՝ ո՞ւր եք, չքնաղ խոստումներ խաչին,
Եղբայրության բարբառներ, ո՞ւր եք,
Կրակ կը փսխե հողն ամենուրեք,
Գետերն արյունով, դիակով կուչին...

Սակայն սխալ կլիներ կարծել, թե Սևակը առաջ է քաշում աստծու ժխտման գաղափարը։ Ճիշտ է, նա բողոքում է, ցասումով ծառանում կացության դեմ, նա բողոքում է հիշեցնելով նրան իր խիղճը։ Եվ վերջապես, նա ուզում է ասել, որ ժողովրդի գլխին պայթող աղետները կյանքի և հավատքի տարբերությունից առաջ չեն եկել, այլ այն բանից, որ՝

Որովհետև դեռ հեռու է օրն այն,
Երբ գայլն ու գառնուկը սիրով արածին...
(«Զանգակներ, զանգակներ»):

Գոյության կռվի մեջ մարդը դեռևս իր բնազդներին անձնատուր ապրելու համար «պետք է ակ-

ռան սրեր լռելյայն»։ Պայմանների այդ պահանջից, բնականաբար մարդը պետք է կարծի, որ «Թուրն ավելի արդար է խաչեն»։

Սևակի բանաստեղծական ժառանգության մեջ աչքառու տեղ են գրավում սոցիալական խնդիրներին նվիրված բանաստեղծությունները։ Կապիտալիզմի զարգացումով առաջացած սոցիալական հակասությունները, դասակարգային հակամարտությունները, հասարակական անարդարությունները դառնում են Սևակի մտահոգություններին ենթակա իրողություններ։ Եթե «Կարմիր դիրքը» հատորիկի առաջին բաժինը արտահայտում է ազգային տառապանքը, ապա դրքի վերջին մասը՝ «Մարդերգությունը» սևեռում է սոցիալական աղետը, որի դեմ արդեն հանդես է գալիս անհաշտ պայքարի դրոշով։ Այս տեսակետից նա առանձնանում է իր սերնդի մյուս բանաստեղծներից և դառնում է կարմիր պայքարի երգիչ։ Ակներև է, որ «Կարմիր դիրքը» հատորիկի առավել հաջող և ուժեղ բաժինը «մարդերգությունն» է թե՛ ձևի մշակմամբ և թե՛ մտածման ու խորհրդի լիապես հագեցած բովանդակությամբ։ Նշանակալից է «Մարդերգության» առաջին բանաստեղծությունը՝ «Գյուղական եկեղեցիին մեջ», որ սկսվում է Արևմուտքի քաղաքակրթության քննադատությամբ։ Եվրոպայում, որ կապիտալիզմը իր զարգացման բարձր աստիճանին էր հասել, ծայր էր առել դա-

սակարգային հակամարտությունը, խորացնելով կյանքի անարդարությունն ու բռնությունները։ Բանաստեղծը տեսնում է, որ կյանքի բարիքները վայելում են մի բուռ մարդիկ, որոնք հոծ զանգվածների համար աշխարհը դարձնում են մի հսկա դելարան։ Մարդկանց շահամոլության ու եսապաշտության տիղմի մեջ թավալում է խիղճը, սերը, կրոնքն ու երջանկությունը։

...Հոգնած ապամեն
Շատ բաղամակիրթ այս Արևմուտքեն՝
Ուր խեղճը բառ մ է, մարդը՝ մեքենա.
Աշխարհ գործարան մ' անխոնջ, անխընա.
Սերը հաշիվ մ' է և կրոնքը՝ դրամ.
Երջանկությունը՝ ձանձրալի մի տռամ.
(«Գյուղական եկեղեցիին մեջ»)։

Կապիտալիստական հասարակության մասին Մարքսը գրում է. «Արդի հասարակությունը ոսկուն ողջունում է իբրև իր կյանքի ամենահարազատ մարմնառությունը»։ Փողի կուլտը հասել է այն աստիճանին, որ մարդկանց արժանիքների և իրավունքի ստուգանիշը նրանց փողի քսակն է։ Հարգանքը, պատիվը, մեծարանքն անդամ հանված են սակարան։ Եվ ժամանակաշրջանի հոգեբանությունը արտահայտվում է «ամեն ինչ փողի համար» զաղրելի ըմբռնումի մեջ։ Բանաստեղծը հանդիսատես է գյուղական եկեղեցում մի մեծահարուստի նորածին որդու կնունքին.

Բայց բացառիկ տոն մ' էր այդ կիրակին.
Կնունքն էր ջոջի նորեկ որդյակին,
Ինչ որ գյուղին նույնքան է կարևոր,
Որքան ծնունդի տոնը դարավոր
Նազարեթի նին քաղաքացին.
(«Գյուղական եկեղեցին մեջ»).

Ցույց տալուց հետո, թե վիրդն ու հարստությունը մարդկային ընկերության մեջ ստեղծել են չարաղետ խրամատն ու անդունդը, բանաստեղծը ֆրիկյան դասականությամբ մերկացնում է այդ անհավասարությունը.

Մեկ նորածին որդին մեծատուն,
Մյուսը աղքատ ծնունդը անտուն.
Մեկը բենեզով ճնած, մյուսն արքուն.
Մեկուն ժանյակներ, մեռամսի նյուսկեն,
Մյուսին ձորձ մի խին՝ նորը շապիկեն.
Առաջնույն ոսկի, ժանյակ բյուր տեսակ,
Երկրորդին նակտին փշի սև պսակ.
(«Գյուղական եկեղեցին մեջ»).

Սևակի հոգին արտահայտում է մարդկային անարդարության առջև։ Մարդը թեկուզ տխեղծ ու վատուժ՝ վերջին հաշվով, մարդ է իր զգացումով և հոգով, իր ապրելու իրավունքով։ Եվ ոչ մեկը բարոյական իրավունք չունի նրան քամահարելու և իր օրենքները բռնի կերպով պարտադրելու։ «Գյուղական եկեղեցին մեջ» կատարվող կնունքի երկու թափորների առջև տարվում է նա այն խորհրդածությամբ, թե աշխարհ եկած երկու մանուկների բախտը

պայմանավորված է նրանց ծնողների տնտեսական կարողությամբ։

Մի այլ գրվածքում «Գյուղական ճամփուն վրա» բանաստեղծության մեջ, նա կանգ է առնում կապիտալիզմի օրոք կապիտալիստական սիստեմին հարակցող երևույթների վրա։ Առաջ, երբ ժողովուրդները տանջամահ մեռնում էին սարկության և ճորտության մեջ, որպես այդ օրենքների «բնական» արդասիք, ապա կապիտալիստական հասարակարգը այդ հակասությունն արտահայտում է ավելի խորացրած ձևով, հանդես բերելով նաև կապիտալիստական սիստեմի հատուկ առանձնահատկություններ։ Բանվորների աղքատացման ու կեղեքման, մասսաների ծայրահեղ չքավորության վրա ավելանում է նաև աշխատանքի սարկացումը։ Բանաստեղծը հին դարերի տեսիլքից սթափվելով կանգնում է ահա նոր իրադրության, նոր կացութաձևի առջև.

...Հանկարծ ծանր բև մը զարկավ ուսիս։
Հին եռազներեն արթնացավ հոգիս.
Ու տեսավ տարեց մշակ մը տժգույն։
— «Ո՞վ ես դուն»։— «Անունս է աշխատություն...»
— Ի՞նչ կրնես այսպես»։— Կը մուրամ...» ճծծեց.
(«Գյուղական ճամփուն վրա»)։

«Մարդերգության» վերջին գլուխը՝ «Գյուղական գերեզմանատան մեջ», բնորոշ է բանաստեղծի աշխարհայացքի մի այլ կողմի համար։ Կյանքի և

ապրող մարդկության ապագայի տեսակետից նա լավատես հեռանկարներ չունի։ Մի ծանր հուսահատություն է պաշարում բանաստեղծին, և նա այդ դրությունից ելք գտնելու անկարող, դալիս է այն եզրակացության, թե կյանքի բոլոր հակամարտությունները, բոլոր պայքարներն ու վեճերը լուծվում են միայն մահվան մեջ։ Եվ այս մռայլ մտորումները արդյունք են նրա հուսահատության։ Մի քիչ ավելի խորը թափանցելու դեպքում նկատվում է, որ Սևակի հոռետեսությունը կյանքը ժխտելու հետևանք չէ, այլ բխում է կյանքի հանդեպ ունեցած մեծ սիրուց։ Ասել, հակառակ ամեն տեսակ վատ հանդամանքների.

«Անկողին զամված, փտիլ, ցավիլ, լալ,
Դարերով, ինչ լավ... Բայց մեռնիլ, չըլլալ։

Սևակի հիշյալ բանաստեղծություններին ներքին սերտ կապով առնչվում են և այն գրվածքները, որոնք լույս են տեսել ժամանակի թերթերում և հանդեսներում, և որոնք ստվերական հրատարակության մեջ ամփոփված են «Խառն բանաստեղծություններ» և «Պոեմներ» վերնագրի տակ։ Սոցիալական միևնույն հարցը, տնտեսական կացությաձևի, անգործության, կյանքի զրկանքներից ընկած զոհերի խնդիրներ են շոշափում «Այս դանակը», «Դրամին աղոթքը», «Կարմիր դրոշակը», «Փողոց ավլողը», «Պոլսո որովայնին մեջ», «Պոռնիկը»,

«Արգասավորում» բանաստեղծությունները [1]։ Այս բանաստեղծությունների մեջ, նա հանդես է գալիս որպես աշխատավորության սառասպանների երգիչ։ Կապիտալիզմի ճիրաններում գալարվող մարդկանց դատապաշտպանն է նա։ Նա չի կարողանում լռությամբ անցնել սոցիալական անարդարության կողքով, երբ մի տեղ մեծատունը հղփացած է ճոխ վայելքների մեջ, իսկ մի ուրիշ տեղ աշխատող մարդը կարոտ է օրվա հացի («Կարմիր դրոշակ»)։ Նա ընդվզում է այս անհավասարության դեմ։ Այդ հանգամանքի ճշգրիտ մեկնաբանումն ու քննադատությունը խոր կերպով տրված է « Այս դանակը» բանաստեղծության մեջ, որտեղ Սևակն իր եղրակացությունների մեջ մոտենում է ռևոլյուցիոն աշխարհայացքին։ Աղքատ բանվորի ընտանիքը ապրում է ծայրահեղ չքավորության մեջ, խլուրդների նման ընկած մի գետնափոր նկուղում։ Այնտեղ սովից ու ցրտից մահանում է նրանց զավակը։ Մյուս երեխաները հաց են ուզում։ Տանը հաց չկա։ Քաղցի և մահվան այդ թշվառության մեջ հանկարծ երեխաների մոր սրտում վրեժի ցասումն է բոցավառվում, և նա վերցնելով հացի դանակը, գնում է ամուսնու առջև, որպեսզի նա գնա դանակի ուժով հաց ճարի։ Ծերուկ դոր-

---

[1] Ռուբեն Սևակ, երկեր, Հայպետհրատ, Երևան, 1955, էջ 144, 93, 101, 156, 97, 99 100։

ծավորը վազում է փողոց։ Մութ փողոցում խնջույքի տնից դուրս են գալիս հարսանները, որոնց մեջ ահա նա տեսնում է իր սիրոջը։ Բանվորը հարձակվելով նրա վրա, գոռում է.

Գրաբյուն, պարո՛ն, ընտանյաց հայր եմ,
Զգո՛ւյշ մերժելու, ձեր հոգին կայրեմ...

Հարուստը ինչ որ ունի՝ ժամացույցը, շղթա, գրամ, թողնում է ու փախչում։ Բայց մի բոպե հետո բանվորի ներքնաշխարհում մի անիմանալի փոփոխություն է կատարվում հանկարծ։ Նայելով տակուն, հացի դանակին, նայելով իր սիրոջ շվարած վազքին, նրա սիրտը փղձկում է, նա չի ուզում իր ապրուստը դանակի ուժով ճարել և փողոցում անձնասպան է լինում։

Այս բանաստեղծության մեջ Սևակի միտքը տեղատեղ հանդես է գալիս ուշադրավ փայլատակումով։ Այսպես, անոթության ու սովի պատճառները հասարակական կարգերով բացատրելուց հետո, շեշտում է այն հանգամանքը, որ այդ հասարակությունը մեկի անոթությամբ է ապահովում ուրիշի հացը և մի երկրորդի մահով է կենդանացնում մեկ ուրիշի կյանքը.

Հա՞ց... ով ողորմուկ երեխա սոված.
Հաց չկա. Այսպես է տնօրինված...։
Դու դեռ շատ փոքր ես, դեռ չես հասկանար,
Որ հարուստն ունի իրավունք հնար

Քեզ մեռցնելու ծանրածանր մանով,
Օրենքն է իրեն պաշտպան ապանով...»:

(«Այս դանակը»):

Վերջին տողերը հատկանշական են արդեն: Շահագործողների կողմից մարդկանց լռելյայն պլոկումը պետական օրինականացում և աջակցություն է գտնում: Դա արտահայտություն է այն մտքին, որ պետությունը, դասակարգային հասարակության մեջ, շահագործողների ձեռքին բանվորների վրա բռնանալու և նրանց ստրկացնելու մի գործիք է: Այս բոլորով հանդերձ Սևակը դասակարգային պայքարի ըմբռնումից հեռու է կանգնած: Նա հասարակության մեջ տեղի ունեցող պայքարը դասակարգային շահերի բախում նկատելու փոխարեն՝ հասարակությունը դիտում է որպես շար ու բարի մարդկանցից կազմված մի ամբողջություն, ուր պետք է բարին հաղթանակի: Նրա աշխարհայացքի թուլությունը ավելի է շեշտվում բանաստեղծության վերջին տողերում, երբ նա ուսուցիչն պայքարը վոխարինում է մարդկության բախտը անարյուն կերպով նվաճելու անընդունելի գաղափարին:

Եվ որ կրնայիր շարժումով մը լոկ
Արյան վրա հիմնել օրենքդ ապագա,
Բայց կսպասես, որ խաղաղությամբ զա,

Աղաղուրյամբ զա, զա տարվետարի.
Զրկված մարդկուրյան երազը բարի...
(«Այս դանակը»)։

Սևակի մոտ կարմիր հեղափոխությունը դասակարգային հակամարտության արդյունք չէ, այլ տարերային մի բողոք անարդարության ու չարիքի դեմ բնազդական կրքով ընդվզած։ Նրա տեսակետը մարդկայնական վսեմ գաղափարներով համերաշխված հարաբերությունների ներդաշնակումն է. չարիքի սահմանափակումը և անիրավությունների վերացումը, հետամտելով համամարդկային երջանիկ ապագայի երազին։ Այս իմաստով նա եղբայրության և մարդասիրական գաղափարների սպասարկուն է և խեղճերի ցավի երգիչը։

Հատկանշական բանաստեղծություն է «Դրամին աղոթքը»։ Բանաստեղծը իր հասարակարգի թշվառությունների սկզբնաղբյուրը իրավացիորեն փողն է համարում, դրամի դերազորությունը։ Դրանից է սկսվում մարդկային ողբերգությունը, որովհետև այդ հասարակության ներսում մարդիկ՝ բոլորը, մոռացած ամեն բան, խուճապահար մի վազքի մեջ ձգտում են միակ բանին՝ «փողին»։ Հասարակական սիստեմը իր կառուցվածքով ընկերության, ինչպես և անհատների կարիքները տնտեսական և իրավական տեսակետից չի ապահովում, և մարդը պաշտպանությունից զուրկ իր գոյության կռվանը գնում է որոնելու փողի մեջ՝ իբրև գոյության զո-

բավիգի։ Փողը՝ այդ հասարակության հիմքն է, և այդ իսկ հիմքի մեջն է տառապող մարդկության դժբախտ ճակատագիրը, և մարդը իր անկումները չի գիտակցում հաճախ դեպի փողն ունեցած իր ձգտման մեջ։

Տառապանքի, անմուսության ոբեր խուլ
Կը խեղդվին քար պատերու տակ խարխուլ,
Սովալըլուկ բյուր թշվառներ տոտմոռեն
Իրենց նիհար ձեռքերը քեզ կերկարեն ,
Ու տենդաճար, փողոցին վրա, ամեն դի
Քանի փոքրեր կան՝ մայրազուրկ, անորի։
(«Դրամի աղոթքը»)։

«Փողոց ավլողը» նմանապես միևնույն մտահոգությունների մի ուրիշ ապացույցն է, այս անգամ մարդը դիտված է իր բազմադիմի վիճակների մեջ։ Խոր ափսոսանք մարդու կողմից մարդու վիրը նետված նվաստ և ստրուկ պարավանդումների համար։ Քաղաքակրթությունը իր առաջադիմության մեջ ավելի շատ կաշկանդումներ է ստեղծել մարդու համար, քան թե ազատել է նրան իր շղթաներից։ Հասարակությունը շերտավորված երկու բանակի՝ մտել է իրարամերժ պայքարի մեջ։ Այդ պայքարը անձնական շահի զսպանակից արտամղված ընթանում է նրբագույն դավադրություններով։ Պայքարը զուրկ է բարձր գաղափարականից, այլ շնային եսականությունն է նրա շարժիչ ուժն ու թիրախը։ Մարդկային վսեմ գաղափարներն ու ձգտումները

հանված են անուղղակի չարաշահման, ծնունդ տալով համայնական թշվառության։ Սոցիալական մի ճշմարիտ քաոս, ուր կեղծիքը, սուտը, նենգությունը գոյության իրավիճակ, ուր «զումն զգացմունք մ' է գրեթե մանկական»։ Պետական և սոցիալական օրենքները իրենց անտարբերության» մեջ փտած՝ սրբագործում են գործնականապես «փոքրերն անվրեպ մեծերու կերը են» անուղղակի կարգախոսը։ Սևակի մտածողությունը փայլատակում է դարձյալ և «քաղաքագետներին», «կառավարական» սիստեմներին սնանկ է հռչակում, որոնք ոչ այլ ինչ են, եթե ոչ՝ աշխատավորությանը սարկացնող միջոց։ Օրենքը հզորագույնի կամքն է.

Բայց ինչ փույթ, կեցցե՛ կառավարություն,
Իրեն է անուշին դիակն անարյուն,
Նախ կըսպաննե, բայց կը բաղե ձրի...

. . . . . .

Արքան խեղճերուն տերն է համարեն

. . . . . .

Կառավարություն... Ինչ բարի, բարի...։
Աղքատին դպրոց բացեր է ձրի,
Որ հոն սովեցնե կարդալ ու գրել,
Օրենքի առջև կռնակը ծռել...
Գիտնալ որոշել շարը ու բարին,
Սեփական փողեն տուրք տալ կեսարին...
Ելլալ ճնազանդ մեկ կարգնատու կով,
Ջորք գրվիլ, մեռնիլ արքային կամքով...
Հարգել հարուստին վաստակն անօրեն...

Դեմոկրատ և հումանիստ բանաստեղծը, ինչպես միշտ, նույնպես այստեղ, կողմնակից է հարստահարվածներին ու զրկյալներին, հայտարարելով, որ՝

Աղքատասեր սիրտ մ'ունիմ ես ինքս ալ:

Բայց դարձյալ մենք տեսնում ենք միևնույն հարցի անհանգիստ տադնապը, թե ո՞ր օրենքով, ո՞ր ուժով հարկավոր է վերջապես վերականգնել անգոսնված արդարությունը: Եվ դարձյալ ահա գալիս և հանդում է ռևոլյուցիայի գաղափարին:

Որ օր մ'երբ վրնիտ նոգիդ փրփրի,
Թե արժան չէիր դուն այս վատ կյանքին,
Օր մը քու դողդոջ ձեռներդ մոլեգին,
Անխիղճ մեծերուդ ադիքը պատռեն...
(«Փողոց ավլողը»):

Որպեսզի հավիվ հասած այդ վճռին, նրան նորից պաշարեն որպես խրոնիկ հիվանդություն, պայքարի ձևի կրավորական ու պասսիվ կերպերը, որոնցով նա տուրք տա վերացական խոհերին՝ բանվորին զինելով մի տեսակ խուլ և անբարբառ ատելությամբ, որի մեջ պետք է գտնի նա իր վրեժի բավականությունը կամ հոգու անդորրությունը: Տարակույսից զերծ է, որ Սևակը իր գաղափարներով առաջադիմական է: Նրա խոցելի կողմն այն է, որ նա չկարողացավ տեսնել ու հասկանալ

այն օրինաչափ ուղիները, որոնց միջոցով բանվոր դասակարգը որպես հասարակական միակ ուժ, պետք է վերացներ մարդկության ուսերին ծանրացած ստրկական լուծը։ Բայց մյուս կողմից՝ որպես քննադատական ռեալիզմի ներկայացուցիչ, անխնա պարսավում է ընկերական կարգ ու սարքը, դիմակազերծ է անում ուծացած արդարությունը, ցույց տալով միաժամանակ այդ աղետավոր հասարակության տնտեսական և սոցիալական պայմանների զոհերին։ Ինչպես Վարուժանը (Գողգոթայի ծաղիկներ), այնպես էլ Սևակը ռեալիստորեն նկարագրում է հացի դժնդակ պայքարի մեջ «Ինկած քույրերին», որոնք թույլ ու անզեն մի կտոր հաց ճարելու համար վաճառքի հանեցին իրենց սերն ու մարմինը («Պոյսո որովայնի մեջ», «Պոռնիկը»)[1]։ Բանաստեղծը դուխ ու կարեկցանք ունի նրանց համար և այպանք՝ պաշտոնական բարոյականության դեմ, որ չքմեղացնում է հոգու ու մարմնի առուծախը դրամի և հացի փոխանակությամբ։

Կրսպասեիր դուն պատրաստ ու համակերպ ու հրլու,
Առանց սիրո ընտրության, նվիրվելու համար, քույր,
Այն բարեհաճ արույին, որ հաց ուներ քեզ տալու...

Եվ վերջապես «Թրուպատուրները», որպես Սևակի լավագույն բանաստեղծություններից մեկը,

---

[1] Ռուբեն Սևակ, Երկեր, հայկեհրատ, Երևան, 1955, էջ 97, 98, 99։

արտահայտում է ցավագին զգացումներ արվեստի ու երգիչների անկման մասին, որոնք իր դարի շահագետ ու դրամապաշտ ոգու ազդեցության տակ կորցրել են իրենց վաղեմի հարգն ու պատիվը։

«Թրուպատուրները»՝ միջնադարյան այդ թափառաշրջիկ երգիչները մի առիթ են դարձել, որպեսզի Սևակը իր խոր մտորումներն արձանագրի։ Այսինքն՝ անցյալի և ներկայի, կյանքի և բնության, մարդու և հասարակության մասին ունեցած իր հայացքների ամբողջական սինթեզը կատարի։ Կյանքը դիտելով թրուպատուրի յուրահատուկ հոգեբանության և կենցաղի տեսանկյունից, բանաստեղծը ներկա ժամանակների խոցերն ու արատներն է վեր հանում, որոնք եղծել ու խաթարել են ինչ որ կար հնում մաքուր և ազնիվ։ Նրանք ազատ և անկաշկանդ կյանքի հերոսներ են, որոնց համար հորիզոնները անծայրածիր են, և տափաստանները սահման չունեն։ Թրուպատուրի անձի մեջ բանաստեղծը դիտում է և մանավանդ սիրում է տեսնել այս աշխարհի պայմանական կարգ ու սարքից ազատ, կեղծ ու պատիր օրենքներից վեր և ոչ մի պարտավանդում չճանաչող, այլ դրանք արհամարհող ազատ երգչին։ Պիտի ասեի՝ երգիչ-արվեստագետի այն աննվաճ հոգին, որ չի խոնարհվում, չի ընկճվում տառապանքների, բռնության կամ մահվան անխուսափելի հաղթանակի

առաջ։ Այլ ընդհակառակը, մի բուռն կամքով այս սուտ ու անարդար աշխարհը իր հիմքերից հեղնելու կորովամտությունն ունի, որ ավելի քան հմայիչ է։

Բախտը, տառապանքն, հարափոխ հովեր
Իրենց դեմքին մուր ժպիտ մ'են տվեր,
Կյանքը նանչցողի ալեկոծ ժպիտ։
Ու իրենց բռնի ձևին մեջ հոպիտ,
Խոիվ մազերուն ներքև ալեոր,
Աշխարհքն հեգնելու հով մ'ունին աղվոր
Թրուպատուրները։

Մեքենայության այս դարը երկար
Զրնկնեց դեռ իրենց հոգին խանդակաթ.
Ու ոստաններուն միջև դրամապաշտ՝
Թշվառության հետ գլուխ գլխի հաշտ
Կապրին նախնական կենցաղով ազատ,
Ազատ բնության որբերն հարազատ
Թրուպատուրները։

Նրանց իդեալականը ազատությունն է և անձի ինքնիշխան հպարտությունը։ Նրանց համար այս աշխարհի նյութական խոսումներն ու բավականությունը արժեք չունեն։ Այլ միմիայն սեփական անձի անսահմանափակ ազատությունը, որ ոչնչով չի փոխարինվում։ Թշվառությունը, դրկանքներն ու հալածանքը անզոր են նրանց անձնական ազատության գերագույն երջանկությունը բռնադատելու։

Չի մենք ենք, մենք ենք, բանաստեղծ, պոետ,
Մենք, պատառոտուն բեհեզով վետ-վետ
Երգի իշխաններ՝ խպառ հայածված,
Մենք նորի, հպարտ երբեմնի ատված,
Մենք չհասկրցված, մենք եղերական,
Մենք բանաստեղծներ, մենք ենք իրական
Թրուպատուրներ:

Մենք, որ մեր վերքեն երգեր կշինենք,
Մենք զրկվածներ ճակատագրեն ինենք:
Ու մինչ ուրիշներ առատ կջամբեն
Խինդի սեղանեն, մուսայի ճամփեն
Մենք կերբանք ստույգ մանվան անվաղ
Մենք, հին մարդկության ուշ ծնած, ավաղ
Թրուպատուրներ:

Արդարև, ազատ մարդու հոգեվիճակի ցայտուն բնութագիրն է տալիս բանաստեղծը, ըստ որում՝ մարդը իր ազատության մեջ ատված է դառնում։ Այսինքն՝ մարդուն իր կոչումի գերագույն կատարելագործման և վերհացումի, այսինքն՝ դեպի ատվածության առաջնորդող միակ ճանապարհը ազատությունն է համարում նա։ Արդյո՞ք հետևում է, որ անձի անիշխանական ազատության գովքն է անում բանաստեղծը։ Ոչ։ Նշանակում է ուրեմն, որ դա իր ժամանակաշրջանի հասարակության երկաթե շղթաների մեջ կապկպված մարդու հոգեբանության անդուսպ ձգտումն է դեպի ազատություն, դեպի ազատության ռոմանտիկ աշխարհը։ Եվ իրոք, այս աշխարհի տերը ազատ

մարդն է, որին չի կարելի ոչ մի կուռք պարտադրել, որի հիացմունքները չեն սակարկվում, որի գաղափարները չեն կաշկանդվում, որի զգացմունքների վրա կարելի չէ բռնանալ և որի միակ ասելիքը ճշմարտությունն է:

Մենք ենք, որ անփույթ գրչով կենցենք
Այս ենթգ աշխարհին պսակները ենթգ:
Քնար մը ձեռքներիս, անուն, մահագին,
Ձենք ցանկար սարուկ — պետի դղյակին:
Ազատ բարբառի ասպետներ անահ,
Կապրին մեռնելով, կմեռնին անմահ
Թրուպատուրները:

Եվ պատահական չէ, որ թրուպատուրների՝ այդ միջնադարյան թափառաշրջիկ երգիչների մեջ, որոնք ժողովրդական բանաստեղծներ էին ուրույն սովորություններով և տրադիցիաներով, բանաստեղծը տեսնում է ազատ երգի իշխաններին: Նրանց կենցաղի և ազատ վարքի առանձնահատկությունները Սևակի կողմից վեր են հանվում հակադրվելու ժամանակաշրջանի նորօրինակ, այլ զգայազուրկ և անդեղապաշտ հոգեբանության: Երգի ու երգիչների բնագավառն էլ զերծ չի մնում բուրժուական հասարակության առաթուր ավերածությունից և կանխիկ հաշվի մերկ հարաբերության մեջ արվեստն էլ արծաթի կողմից հանվում է կախաղան.

Այս ինչ դարերու հասել ենք, Աստված,
Փշրեցին ինչ որ կար վսեմ կերտված,
Թե դեռ սիրտ ունիք՝ քաղելու տարեք,
Ոսկիին ենթգ ձայն է ամենուրեք,
Մի միայն մենք ենք, որ դեռ անարգել
Սիրել կերազենք, ով կուզե սիրել
Թրուպատուրները:
(«Թրուպատուրները»):

Բ.

Ռուբեն Սևակի ստեղծագործությունների մեջ մի կարևոր մաս են կազմում նրա սիրային բանաստեղծությունները, որոնք հեղինակի կողմից ծրագրված են եղել ամփոփվելու «Սիրո գիրքը» անուն հատորի մեջ։ «Սիրո գիրքը» առաջին անգամ լույս է տեսնում սովետական հրատարակությամբ։ Սևակի այս տաղարանը պարունակում է սիրո զգայնություններ արտացոլող գողտրիկ քերթվածներ, որոնց մեջ բանաստեղծի երիտասարդ և սիրատարփ հոգին սիրո երջանիկ վայելքներով է արբեցած։ Սիրո, կյանքի նկատմամբ մի զորեղ տենչանք և նրա մոգական ձգողության առջև համայն աշխարհը մոռանալու մի խոլ սիրտ, որ սիրո վճիտ կոհակների մեջ անհետանալու ըղձանքն ունի։ Բանաստեղծը կամավոր և ինքնակամ ուխտավորն է այդ հավիտենական զգացմունքին, որի լուսարձակումներից փարատվում են կյանքի մթու-

թյունն ու մահվան ստվերը։ Այդ սերը, սակայն, Սևակի մոտ աննյութական, եթերային, անիրական մի դաղափար չէ, այլ առարկայական և շոշափելի իրականություն։ Եվ նրա սիրո երգերը ողորկ ու տաշված խճաքարերի նման փայլփլում են նրա վճիտ զգացմունքների թափանցիկ ջրերի տակ։ Ու բանաստեղծությունը, իբրև հոգու երգ ու երաժշտություն, իր կոչման մեջ է։ Սևակի այդ բանաստեղծությունները մեզ ներկայանում են իբրև ներքին մի անբացատրելի և յուրօրինակ ներշնչումի բխման արգասիք, որ գալիս, ներդաշնավորում և կապում են մարդը բնության և կյանքի երևույթների հետ։

Նախ և առաջ պետք է շեշտել, որ այդ բանաստեղծությունները նախորդ ստեղծումների վրա բերում են շնորհալի ու ներդաշնակ կառուցվածքի առավելություններ, սահուն և երաժշտական դնացքով, տաք ու սրտաղեղ հուզականության մեջ թաթախված։ Բանաստեղծն այստեղ գեղեցկի, վսեմի, թովիչ ու կախարդական ձևերի խուզարկուն է, չբացատրվող իրերի գաղտնասացը, որոնց անմեկին խորհրդից այրվում է նրա հոգին։ Մենք կարդում ենք նրա «Ահա կերգես, Դասիանա», «Քնացող աղջիկը», «Երգ երգոցը», «Այդ գիշեր», «Եկուր», «Սիրո և մահվան երգը» և մեր միտքը, եթե մնում է հայտնված մտքերի բովանդակության առջև անտարբեր, ապա մեր սիրտը լցվում է նրա

սողերի դորովագին սիրտ, կարոտավոր կանչի և նրա կորած հիշատակների համար թափված տաք արցունքով։

Նկուր, ես քուկդ եմ, քեզ արքա ու գերի,
Ես, մեղապարտ անոթը սուրբ համբույրիդ...
Հեռս աղոթքի պես դեմքիդ շուրջ կ'դեգերի,
Պաշտամունքիդ ես խնկանոթ միամիտ։
Նկուր, ես քուկդ եմ, քեզ արքա ու գերի...

Քու տանարիդ ես քուրմ երգիչն եմ դողդոջ.
Ու դուն մարմինն ես անմարմին երգերուս,
Խենթեցրնող հավերժահարսը բոդրոջ,
Ցող մանացնող սրտի հազար վերքերուս.
Սուրբ տանարիդ ես քուրմ երգիչն եմ դողդոջ։
(«Նկուր»)։

Կամ

Այտերն ի վար, այտերն իր վար ուր հավեա
Կը սուչորի հետքը վերջին համբույրին.
Իշիր, արցունք, զովությանդ մեջ երկնավեա,
Թող սերերու հետին բոցերը մարին։

Գգվանքներու ծովուն վրա ալեվեա
Մեռած, թոշնած խոստումներուն վրա ցրտին՝
Իշի՛ր, արցունք, զովությանդ մեջ վենտավեա,
Իշի՛ր սառած երազներուն վրա սրտին։
(«Արցունքին երբվածը»)։

Տրամաբանական ու մելամաղձիկ վիճակներ են առթում բանաստեղծին նույնիսկ սիրային վայելքի պահերը, երբ թվում է, թե մարդը երջանիկ արբեցումից բացի ուրիշ ոչինչ չպետք է զգա։

Բայց տարբեր է բանաստեղծը։ Նա իր ներշնչանքով վերանում, օրորվում է առարկաների ու իրերի հեշտամրմունջ ծփանքի մեջ մի երանական վիճակում, որ բուն ինքը բանաստեղծությունն է։ Դաշնամուրի առջև նստած գեղեցիկ կնոջ ներկայությամբ («Ահա կերգես, Դասիանա»), նրա երգի ու նվագի ձայներին ունկնդիր՝ բանաստեղծը երազների գիրկն է փոխադրվում, ուր իրականությունը իր արվեստագետի խառնվածքի կնիքի տակ ավելի գեղեցիկ է զգեստավորում տարաշխարհիկ հույզերի մեջ թաթախված.

Դասիանա, անա, ստվերն իրիկվան,
Երազներու տարտամ գույնին պես աղվոր,
Մութ սենյակիդ առարկաները բոլոր
Կանհետանան, կըգինովնան, կըմնան։
Անա ստվերն իրիկվան։

Դաշնակիդ վրա ծաղիկներդ կերազեն,
Կըդժգունին ծաղիկներդ դեմքիդ քով,
Ու սարսուռով ու նամբույրով ու խունկով,
Օծուն շունչը քեզի կուգա պարտեզեն։
Ծաղիկներդ կերազեն։
(«Ահա կերգես, Դասիանա...»)։

Եվ այսպես, բնական շարունակությամբ՝ բանաստեղծը անձերից, առարկաներից, ձևերից, գույներից և գծերից վեր անբացատրելին է տեսնում, նրանց ի մի ձուլող մեծ օրենքը, ցանկանալով շոշափելի դարձնել անըմբռնելիի խորհուրդը։ Ահա նա

տեսնում է «անդուսներու դյութական փրփուրի մեջ» քնած աղջկան։

Այսպես մուրին մեջ փռվա՞ծ, դիցուհիի մը պես ինն,
Ձեռ գիտեր ինչ մը ուներ ան պաշտելու անավոր,
Դեռափթիթ աղջընակն իր մռափին մեջ լռին։

Ու իր շունչին մեջ համակ, անրջանքի, համբույրի,
Դեռ չի ծծած բույրերու պատարագ մ'էր հնչուռոր...
Օհ, ինացող կիրքերեն ծորող նեկտարը վայրի...
(«Քնացող աղջիկը»)։

Ամբողջ այս կյանքն իր հետաքրքիր երևույթների և զանազան կողմերի մեջ, իր բոլոր առարկաներով և իրերով և, վերջապես, բնության համայն տեսարաններով բանաստեղծի հոգու համար «չհասկացված բաներու աղվորությամբ» են օծված, ինչպես պիտի ասեր ինքը։ Նա վերին հոգեղմայլություն է ապրում այս տիեզերքի դյութական գեղեցկության առջև, մի վերացած վիճակ՝ որի գեղեցկություններն անհասկանալի մի դաղտնիք են ներկայացնում իր՝ բանաստեղծի սրտին։

Ահա «ժպիտ» չքնաղ բանաստեղծությունը։ կանացի մի սովորական ժպիտ է դա, որին ճանաչում ենք մենք և որը պարզ կամ թաքուն իմաստներ է պարունակում։ Բայց բանաստեղծի յուրահատուկ զգայնությունը դրա մեջ հիմնովին տարբեր բան է նշմարում, դրա ծալքերի տակ պահված է ինչ-որ չհասկացված երևույթներ...

Ցանկահարույց ու միամիտ,
Բույրի մը պես տարտամորեն,
Հոգիիս մեջ կիջնես նորեն,
Ով կանացի միստիկ ժրպիտ:

Մուր բաժակիդ գոգը վայրի
Հազար բույրեր կեռան գինով.
Դուն ի՞նչ ունիս՝ որ հատնումով
Թարթիչներուդ վրա կայրի:

Անգաղտնապահ վանկերդ ամեն,
Սիրով, տենդով, ցավով հրդի,
Գիշերներուն գաղտագողի
Փլատակները կը պատմեն:

Ու ամբարիշտ խունկի մը պես.
Անուրջի մը պես տարորեն,
Ալիքներդդ գիս կողողեն,
Կարծես հոգիս լացնել կուզես:
(«Ժպիտ»):

Այսպիսով, ինչ որ ընկնում է նրա տեսողության տակ, ինչ ապրումներ որ առաջանում են ներքուստ՝ մի պահ թվում է, թե անհասկանալի մի խորհրդի տակ քողարկված է մնում դրանց իսկական վիճակը, և նա վարանոտ անուններ է փընտրում:

Երա՞զ, տեսի՞լ, անգո ստվե՞ր մ'անհոգի,
Ճառագայթի, փրփուրի խա՞ղ մը տարտամ,
Քմայապաշտ ծաղի՞կ մ'արդյոք ցընորքի,
Քու մշուշոտ գիծերուդ ինչ անուն տամ.
Երա՞զ, տեսի՞լ, անգո ստվե՞ր մ'անհոգի:
(«Երգ երգոց»):

Բայց արվեստագետի ստեղծագործող երկունքը ի վերջո պիտի գտնե դրանց համապատասխան անուններ, համեմատություններ, պատկերներ ու գույներ, որպեսզի ստացվի «Երգ երգոց» սքանչելի բանաստեղծությունը։

Աչքունքիդ մեջ նայադներ պար կը դառնան:
Այդ ի՞նչ հեշտանք, որ շրթունքներուդ մեջ կըմպես.
Շունչդ գինով է հովերու պես զարնան,
Ձայնդ տարփոտ՝ աղբյուրներու երգին պես...
Աչքունքիդ մեջ նայադներ պար կդառնան:

Կը հմայեն գիս քու աչերդ, կը շոյեն,
Ու մարմինդ ծորող խունկը մեղավոր,
Ավելի քաղցր է Քահանու գինիեն...
Հազարբուրյան այս պատարագն է աղվոր,
Թե լույծ աչերդ, որ մուր հոգիս կշոյեն:
(«Երգ երգոց»):

Եվ ահա սիրած աղջկա գեղեցկության հմայքի առջև երևան եկող զմայլանքը հաղթանակում է մեղավոր խոսքերը և տեղի տալիս գեղեցկության առջև ծնվող հիացմունքի։ Կնոջական մարմնի ձևերի մեջ նա տեսնում է ոչ թե հեշտանքը, այլ գեղեցկությունը։

Տժգույն աղջիկ, հյուսիսայգի աշխերով,
Կոպերուդ վրա ու բիբերուդ մեջ խոնավ
Այդ ի՞նչ աննար երանություն, ի՞նչ զորով...
Ոչ մեկ արգանդ բե՞զ պես հրաշք չրծնավ,
Տժգո՞ւյն աղջիկ, հյուսիսայգի աշխերով :
(«Երգ երգոց»)

Սևակի «Սիրո գիրքը» արտաշնչում է (իր սիրային բանաստեղծությունների մեջ) սիրո վարակիչ զգայնություն։ Այդ բանաստեղծությունների մեջ շեշտորեն սիրո տագնապներ են դրսևորվում սիրո վայելքի ուժեղ ցանկությամբ։ Կյանքի երջանկությունը սիրո մեջ է գտնում։ «Սիրո աղբյուր» բանաստեղծության մեջ ասում է նա պարզորեն։

Ոհ, կուզեի մընալ հավետ ակին քով,
Նիհար ճակատս կոթնեցընել քու քարիդ.
Թաղվիլ ջուրիդ երջանկության պատանքով:

Ու կուզեի հալիլ կուրծքիդ մեջ անհետ,
Լույծ մարմնույդ մեջ կաթիլ մ'ըլլալ, կետ մ'ըլլալ,
Երգել, հևալ, քեզի նման, քեզի հետ:

Ինչ մոգություն կար մարմնիդ մեջ համակ,
Ինչ կրսեին ալիքներդ վազելով,
Ու ինչ նմայք կար փրփուրիդ մեջ ներմակ:

(«Սիրո աղբյուր»)

Սևակի մոտ սիրո վայելքի գաղափարը սակայն, անխառն երջանկությամբ հանդես չի գալիս։ Այսինքն՝ սերը նրա մոտ միշտ էլ պատանգված է մահվան և ունայնության ահավոր մռայլով։ Նույնիսկ սիրո բերկրանքի պահին, երբ մարդիկ մոռանում են կյանքն ու աշխարհը՝ մահվան գաղափարը անբաժան է, որ գալիս է թունավորելու մարդկանց երջանկությունը։

Հոգի՞ս, դո՞ւն, ես՞ս... երկար, երկար քարացան
Այդ դիրքին մեջ բերան բերնի անձնվեր,
Իրենց շունչերն կարծես իրար հանձներ
Այնքան սեր կար այդ պաշտումին մեջ անձայն:

Ու ես լրիկ ու ես անշարժ, երկյուղած
Կը նայեի իրենց երկա՜ր ու վաղվա՜ն,
Կը խորհեի, հաջորդ վաղվան ու մահվա՜ն...
Երբ զգացի, որ էությունս դողաց...

(«Համբույր»)

Սերն ու մահը իբրև կյանքի երկու հզոր երևույթներ՝ անբաժան են իրարից։ Սերն ու մահը մեկ բնի վրա առաջացած երկու ոստեր՝ միշտ ընթանում են կողք-կողքի։ Կարծես մեկը լրացնում է մյուսին, այսինքն՝ որ այս երևույթը նրա աշխարհազգացողության յուրահատուկ կողմը լինելուց բացի, նաև հոգեբանական վկայություն է այն բանի, որ սիրո երջանկությունը անսահման է հողեղեն արարածի համար այնքան, որ մահը նախանձում է։ Սերը իր հալոցքի մեջ լուծում և չքացնում է կյանքի բոլոր տառապանքները, իշխելով և չեզոքացնելով մարդու հոգու մյուս կարգի խոշոր զգացումները։ Եվ սիրել, նշանակում է մահանալ յուրովի։ Եվ ահա դիպված չէ, որ նա սիրո ծարավից բռնված հոգին հիվանդ է համարում, հիվանդ, որ հալչում ու մաշվում է մեղրամոմի պես։ Սիրո համար նա իր կյանքը կցանկանար վիջել մահվան, միայն թե իր պապակ շրթունքները ըմպեն սիրո նեկտարից։

Մարա՜վ, ծարավն ունի հոգիս
Արշալույսի գաղջ ծովերուն,
Մո՜վ-ծով սիրո գաղջ հովերուն
Տայի թերթերն տառապանքիս...

Իր նամբուն վրա ծալած հազար
Կույս ծաղիկները կըսեին.
«Ա՛ռ մեր նեկտարը կուսային...»:
Կանցներ Պարմանն ու կը հազար...

Մարավեր էր: Շուրթերն անահ
Հուսան ծծել նեկտարն ակեն...
Տեսեմ սիրո սուրբ բաժակեն
Պարմանն հիվանդ կըմպե իր Մահ...
(«Սիրո ծարավ»)

«Սիրո և մահվան երգ» բանաստեղծության մեջ ավելի որոշակի ընդգծվում է նրա հոգու այդ կիրքը։ Մահը սիրո մոտ կորցնում է իր ուժը, դադարում է իր ահ ու սարսափի ներգործությունից։ Սերը չեզոքացնում է մահը։ Ահա բանաստեղծը իր կյանքն ու էությունը պատկերացնում է որպես կործանված փլատակներ, որտեղ խավարն է իշխում, բայց վստահ է, որ իր սիրած աղջկա մի նայվածքից պիտի ոսկեզօծվեն, պիտի լուսավորվեն այդ ավերակները՝ կյանք ներարկելով իր տանջահար բանաստեղծի երակներին։

Ես կըսիրեմ իմ տրտմությունս դյուրական...
Իմ տրտմությունս աստվածներու ցավին պես,
Ջո՜ւյր, սրտիս մեջ ի՜նչ խավարներ, վիներ կան,

Զոր նայվածքովդ կոսկեզօծես ու կօրհնես,
Ես կրսիրեմ տրտմությունս դյուրական...

Եկուր ինձի, լուսնյակին պես գեղեցիկ,
Եկուր ինձի, լույս ու ցնծում հնալով
Քու արծաթի շողերուդ մեջ սլացիկ
Լուսավորե ավերակներս լալով,
Ես Մահն եմ, եկ ինձ Կյանքին պես գեղեցիկ...
(«Սիրո և մահվան երգը»)

Բանաստեղծը, պատկերավոր մտածողությամբ՝ խոստովանում է, որ սիրո համար մահանալը մահ չի նշանակում բնավ։ Ընդհակառակը՝ սիրած անձի էության մեջ բանաստեղծը հոգու վերածնում, մի տեսակ սրբացում *է կրում այն սրբանվեր ավազանի մեջ, որ սիրահար սիրոն է ստեղծում իր պաշտած էակի անձի մեջ։ Եվ ահա այս կրքի մոտ մահը ոչ մի ուժ չունի այլևս, և ենթական սիրով է ընկերանում իր սիրած արարածի հետ միասին գրկընդխառն՝ դեպի մահ գնալու։*

Իմ կյանքս բող կորած նավուն պես ըլլա,
Շունչդ ուռեցնե ծեր առագաստս անահ.
Մի՛, մի՛ լսեր հոգնած հոգիս, որ կուլա,
Տար զիս սիրո կղզիներեն դեպի մահ,
Իմ կյանքս բող կորած նավուն պես ըլլա...
(«Սիրո և մահվան երգը»)

Եվ մի քայլ ավելի առաջ, կնկատենք, որ Սևակը այլևս սիրո համար եղած մահը, մա՛հ չի ընդունում, այլ անմահություն.

Մեռնի՞լ, մեռնի՞լ... Անմահանա՛լ մահվան մեջ.
Մեռնի՞լ... գրկիդ կոգն, այսպես մեր սերն անշեջ՝
Անմունին մեջ ծառացընել տիրական...

Մեռնի՞լ... կուլա՞ս... կը խորեին սիրական...
Թևերուդ մեջ քարանալու հանույին,
Քույր մահանույշ, քույր մահազոր, մահագին...
(«Մահազգացում»)

Ահա վերջապես «Ինչո՞ւ» բանաստեղծությունը գողտրիկ, բայց ուժգին։ Կուռ և սեղմ տողերի մեջ Սևակը երիտասարդ սիրո և ծեր սրտի բախումն է տալիս հուզիչ և իրապես խորազդաց ապրումներով։ Փոքրիկ աղջկա սիրո դիմաց Սեր-Աստծու հզորությունը։

Ես կերբամ մի՞շտ, անծայրածի՞ր
Դամբաններ են ոտիս հետեր,
Քեզ սիրո մեղմ սյուք մը պետք էր,
Դուն փոքրիկին կուրծքդ բացիր...

Կայրին աչերդ սևածիր,
Պիտի մեռնիս, այդպես մ'երգեր,
Քեզի փոքրիկ սեր մը պետք էր,
Դուն Սեր-Աստվածը սիրեցիր...
(«Ինչո՞ւ»)։

«Սիրո գիրքը» հատորում կյանքի և մահվան նվիրած երգերի մեջ Սևակը կատարում է խոր ընդհանրացումներ, որոնց մեջ իր բանաստեղծ սրտի քնարական լարերը աղաչավոր և աղեխարշ հընչյուններ են արձագանքում կյանքի տրտմագին

երևույթների ներգործության տակ։ Ահա այն բանաստեղծությունները, որոնք կրում են «Երնեկ ջուր», «Էսքիմոս», «Հին եղանակ», «Ցնծուն մահ», «Կարապի երգը», «Սրինգ» վերնագրերը։ Նախորդների հետ միասին, դրանք գալիս են հաստատելու Սևակ քնարերգուի բարձրագույն ընդունակությունները։ Բանաստեղծը տեսանողն է իրերի ներքին գաղտնիքի, նրանց խորհրդի հայտնատեսը, որի աչքերը տեսնում են այն բոլորը, ինչ որ մեր մահկանացուի տեսողությունից ծածկված է մնում հաճախ։ Մի տեսլահար, որ վերծանում է կյանքի և մահվան եղերապատում տրտմությունները։ Նրա համար իրերը իրեր չեն սոսկ առարկայական մի կոնկրետ առումի մեջ, և ջուրը, ծաղիկը, սրինգը և հնչող եղանակը միայն պատեհություններ են, որ նա վեր հանի կյանքի հանապազ ու հավերժական կսկիծները մահվան դեմ ապրելու անհագ ծարավը արտահայտելով։ Ահա «Երնեկ, ջուր» բանաստեղծությունը։ Բանաստեղծի անմահության ձգտումի վրա նրա կյանքի անձնավորության նախասահմանյալ դատավճիռը խոր ափսոսանքով է լցնում նրա հոգին։ Կյանքի հրապույրների և բնության գեղեցկությունների մեջ բանաստեղծը մահվամբ շղթայակապ՝ երնեկ է տալիս վազող ջրին, որին վիճակված է դարերով շարունակ դաշտերի մեջ իր երգը հնչել։ Մարդկային կյանքի և բնության անհոգի իրերի հակադրումը ծանր վրշ-

տով է համակում անմահության ձգտող բանաստեղծի հոգին, որն զգում է իր գոյության վաղանցիկությունը հոսող ջրի հավերժական կյանքի մոտ, որն իր շուրջը կատարվող մահվան ավերներին անդիտակ՝ քարերի մեջ երգում է անդադար։

Միամիտ վտակ, դարերե ի դար
Դուն մամոռտ նամփեդ կերթաս անմոլոր,
Ու երբ կմեռնին շուրջդ անմխիթար՝
Գարնային գույն-գույն ծաղիկներ բոլոր,
Երկու քարի մեջ կերգես անդադար։

Երնեկ քեզ, վտակ, մեռնիլ չունիս դուն.
Աղցունքե մարմինդ կը վարես անվերջ,
Գիշերներու մեջ միայնակ, արբուն,
Անսկիզբ, անվերջ, վտիտ փոսիդ մեջ.
Կերգես, երնե՞կ, ջուր, վախնան չունիս դուն...
(«Երնե՞կ, ջո՛ւր»)։

Մարդը, սակայն, իր հոգու մեջ անմահության տենչը կրելով հանդերձ, գիտակցում է այն անպարագիծ ողբերգությունը, որ նրա ամեն մի անցնող օրը մի քայլ ավելի է մոտեցնում նրան անխուսափելի փոշիացմանը։ Ըստ այդմ էլ մարդու կյանքը, և նրա մտքի հզոր ստեղծագործությունները խղճալի են ու գթաշարժ։

Մինչև նավերժորեն կյանքոտ, զվարթուն,
Պիտի կարկաչե քու ջուրդ մշտաշարժ՝
Հեգնելով արվեստն ու կյանքը մարդուն...
Ով անմահության ստվեր գետնափարշ.
Վտակ, երնե՞կ քեզ, մեռնիլ չունիս դուն։
(«Երնե՞կ, ջո՛ւր»)։

Մահվան տիրապետության առջև, մարդկանց և բնության երևույթների սահմանավոր էության ցավագին ճակատագիրը մեծ վիշտ է առթում բանաստեղծին, որպես զգացող և խորհող, և նա իր սրտի ամբողջ դյուրազգացությամբ կյանքի արտասվաթոր կարոտներն է պատմում մեզ, ինչպես մեղանից անդարձ հեռացող մարդը, տր պիտի ողբա իր սեփական կյանքի և երազների ունայնության վրա։ Մարդկային զգացմունքի ակնոցներով է դիտում նա իրերի բախտը և տեսնում է այն եղերականը, որ մահը կապում է դրանք իրարու։ Եվ Սևակը զգացող մարդու բարբառին է հանում Ալպյան սպիտակ ծաղկի թառամած փունջը, որ մի գամով կախված է իր սենյակի պատի վրա։ Բանաստեղծը նրա դիմաց մունջ ու լռելյայն, ինչպես մի կենդանի պատկերի առջև, տարվում է տխուր խորհրդածություններով.

Պատիս վրա անխոսուկ, մունջ
Գամ մը մեջիդ՝ կմտածես,
Կը տժգունիս, կուլաս կարծես
Էտելվեյսի ո՞վ վտիտ փունջ։

Մարդու տառապանքն է անձնավորում ծաղկեփունջը, որի մեջ բանաստեղծը դիտում է ոչ թե էտելվեյսի թորշոմած թերթերը, այլ մարդու հոգին՝ ավելի ընդհանուր բառով՝ մարդու կյանքը։ Եվ այլաբանորեն վերաբերվում են կարոտի, տրամու-

թյան, թախծի զգայութիւններ, որ ներշնչում է մեզ իր բարձունքներից խլված և թոշնելու դատապարտված հիվանդ փունջը։

Թառամեր են բերբերդ բոլոր,
Հյուծեր է ցողդ տրտմորեն,
Ո՞ր դժբախտ նովը սարերեն
Քեզ հոս նետեց Մայլամոլոր։

Մաղիկներուդ զոգը վայրի,
Ու բերբերուդ մեջ գալարուն,
Անհաս, հրպարտ բարձունքներուն
Հիվանդ կարոտն է, որ կայրի։

Ու կերազես դուն անշշունջ
Դամ մը մեջիդ ու կոլորի
Գունատ բավիշդդ մոխիրի,
Էտըլվեյսի ո՞վ նիհար փունջ»։

(«Էտըլվեյս»)

Այսպես բանաստեղծի զգայուն սիրտը խորագդաց հնչյուններով թրթռում է իրերի անբարբառ իսորհուրդի առջև։ Եվ նա տեսնում է, որ ամեն առարկա, ինչպես իր հոգին, մահվան դողով է պարուրված։

Շնչհատ մարմինդ կրդողդոջե...
Վանկերուդ մեջ ոժգույն, վտիտ,
Ու հանկերգիդ մեջ միամիտ
Ապրելուն խուլ մաներգը չէ՞...»։

(«Հին եղանակ»)։

Բանաստեղծը բոլոր այդ իրերի անլսելի խորհրդի տեսլապաշտն է. նա սիրում է երևույթների գաղտնիքը որոնել, իջնել նրանց ներքին կյանքի մեջ։ Իր նամակներից մեկում՝ ուղղված Հրանտ Նազարյանցին, Սևակը պարզ կերպով բացահայտում է իր հոգու այս սիրական կողմը. «Կռան Սեն Բեռնար անուն վանք մը կա Ալպեանց գագաթը, ձյուներուն ու լռության մեջ կորսված, երկինքին ու երկրին մեջ առկախ, ժամանակին պես դարավոր ու մահվան պես անխախտ։ Քանի՞-քանի՞ անգամ երազած եմ հոն քաշվիլ, հոն թաղվիլ, բանաստեղծվիլ իմ երջանկության հետ, դուրս նետվիլ այս զզվելի օրենքեն, որ «կյանքի պայքար» կը կոչվի, ապրիլ երազին ու խորհուրդին մեջ, աստվածորեն ապրիլ, հավիտենության խարիսանքն ունենալ, լռությունը խոսեցնել»։

Ահա վերջապես «Կարապի երգը» և «Սրինգ» բանաստեղծությունները։ Առաջին բանաստեղծությունը հին օրերի փառքը կորցրած մի սրտաճմլիկ կարոտի կանչն է, որ անձնավորվում է կարապի երգի մեջ։ Մի հուզիչ և սրտապրավ վերհիշում է դա, երբ ներկայի ծանր ու շղթայակապ դերության մեջ հեծեծող հոգին անցյալի «Ոսկեփառ արշալույսներն է» որոնում։ Բանաստեղծը այդ չքնաղ ոտանավորի մեջ ցանկանում է կարապի վշտի ալիքների մեջ իջնել և հին-հին օրերի հուշ-

քերը և անցած հիշատակների երջանիկ օրերը քրքրել.

Ուրիշ ոչինչ. .. Ու կարապը կսահի...
Խեղճ ծեր կարապ՝ հուշքը հին-հին օրերուն,
Դեռ կօրորե մարմինդ՝ ինչպես ամայի
Լիճերու վրա կսահիր օրորուն:

Անշուշտ լռիկ ժամերուդ մեջ դուն քեզի
Կը պատմես հին արշալույսներն ոսկեփառ,
Երբ կերբայիր բավուտներուն մեջ սեզի՝
Վայրի երազդ ապրելու անբարբառ...

Ու կհիշես գիշերներն ալ դուն լուսնակ,
Երբ ձյունափառ հսկա ծաղկի մը նման,
Գրլուխդ բեիդ՝ կը ծփայիր գոհունակ,
Մեծ լիճերուն կապույտին մեջ անսահման:

Հիմա բաղմին արևուն տակ հրաակեզ՝
Վանդակապատ լճակդ ստվեր մը չունի:
Ու դուն, կարապ, երգ մը չունիս, որ երգես,
Ոչ իսկ ողորմ հիշ մը վայրի բռչունի:
(«Կարապի երգը»)

«Սրինգ» քերթվածի տաք ու ջերմ տողերը անմահ Պեշկեռթյուրյանի համանուն բանաստեղծության իրավ և հուզական տողերն է հիշեցնում իր պարզ ու անպաճույճ արվեստով։ Նա սրինգի հետ մտերմանալու և նրա հետ արտասվելու մեջ է գտնում վշտակիր և հիվանդ բանաստեղծի իր վերքերի ամոքումը։ Եվ արդարև յացող հոգին աշխարհից և մարդկանցից հեռու՝ սրնգի արտասվող

հնչյունների մեջ է ուզում գտնել իր վիրավոր սրտի սփոփանքը։

Երբանք կապույտ սարն հեռակա,
Մարդերեն վեր, աստղերուն տակ,
Մեր լացին լոկ սերը վրկա.
Ու ձայնակից ըլլա վրտակ...

Երգե այնպես, ինչպես կուլար՝
Երբ գիշերի սյուքն աշնայնի
Կը սարսռացներ ոստդ դալար...
Շունչս ալ սյուքն է գերեզմանի...

Ո՞վ իմ սրինգ, ոստ երկնատուր,
Ջորցած կուրծքիդ ես տամ հոգիս.
Ու դուն երգ տուր, դուն վերելք տուր,
Երկինքներ տուր հիվանդ շունչիս...
(«Սրինգ»)

Բոլոր այս բանաստեղծությունները, վերջապես, ուիրուն և դողտր լուսամուտներ են, որոնց բացվածքից մենք հստակորեն տեսնում ենք կյանք կոչվող համայնահանդեսի բոլոր այն խռովքներն ու դրամները, որոնք մարդկային ճակատագիրն են կազմում։ Եվ այդ կյանքից քիչ բարերարված Սեվակի հոգին՝ կյանքի անցավորության և մահվան ավայտագին սգով քողարկված։ Բայց նրա հոռետեսությունը, ինչպես ասվեց, հիվանդագին զգայողության հատուկ մի քարոզ չէ, ամեն ինչ մահվան համայնակուլ երախը նետող, ընդհակառակը, նրա տրամադրություններն ու հուսահատությունը

շեշտորեն լավատես ու պայծառ ենթագիտակցությունից են բխում, անմահության և երջանկության որդեգիր լինելու իր ձգտման մեջ։

Սևակը լավատես և կենսախինդ բանաստեղծ է։ Նրա երակներում հնչում է կյանքի առողջ և ուժգին ձայնը։ Նա սիրում է կյանքը, սիրում է հակառակ իր ծանր տանջանքներին և դաժան մահվան, որոնք գալիս, թունավորում են մարդկանց վայելքն ու երջանկությունը։ Բայց ինչ էլ լինի, վերջապես, մարդը ինչ ճակատագիր էլ ունենա այս արևի տակ, կյանքը շատ գեղեցիկ և հրապուրիչ է, և հետևաբար, արժե վայելել այն։ Ահա այս գաղափարի համոզումով է գրված «Ցնծուն մահ» բանաստեղծությունը, որի մեջ այլաբանորեն կյանքի հանդեպ պայծառ սիրո զգացմունքն է երգվում։ Դալար ծառերի և բուրումնավետ վարդերի տակ վազող վտակը իրեն տրված հարցին, թե՝

Լուսնակի ցոլքը ծոցդ առած,
Դաշտերու մեջ լայնատարած
Ո՞ւր կվազես դուն շվարած...

Կյանքդ արդեն կարճ է, ա՜յ վտակ,
Մի՛, մի՛ վազեր, ծովն անհատակ
Պիտի բաղե քեզ այլաց տակ...

Վտակը պատասխանում է.

Վտակն ճծծեց.— «Թող անդադրում
Վազեն ջուրերս. մի՛, մի՛ տրտում
Արցունք կաթեր անոնց սրտում։

Թող, որ երգեմ լույսն ու մութին,
Ի՞նչ փույթ, թե մանն է քայլ մ'անդին,
Ես սիրահար եմ մարմանդին...

Ու մինչ բերքողը կերազեր՝
Լալով, վրտակը եռուզեռ
Երգով իր մանը կը վազեր...
(«Ցնծուն ման»)

Սևակը սիրում է կյանքը։ Շատ է սիրում և հենց դրա համար էլ նա տխուր է։ Մի քիչ ավելի խորանալով, մենք կնկատենք, որ բանաստեղծի համար կյանքն ու իրերը, որպիսի հանդամանքներով էլ դրոշմված լինեն, իրենց ծննդից մինչև վերջակիտված սահմանը այս հրաշագործ տիեզերքի ընդհանուր ներդաշնակությունից *վերցրած երջանկության շողեր ունեն։ Ապրելը, շշնջալը, նույնիսկ մահանալն ու քարանալը յուրահատուկ երջանկությամբ են կնքված։*

Գիշերն իջավ անամպ, անհուն,
Բյուր բյուրեղեն ի՞նչ նուրբ անուն
Տալ անուրջի այս սուրբ պահուն.
Ա՜խ, ապրելո՜ւ երջանկություն...

Կանչանա նավն հեռակա,
Լինն երազ մ'է, կա ու չկա.
Ջուրի շշունջն է լոկ վրկա,
— Շշնջելո՜ւ երջանկություն։

Վերն հազար աստղ, վարն հազար լույս,
Կիսասվերին մեջ հոգեհույզ

Կը խոսակցին քար, վրտակ, բույս.
— Ա՜խ, իրերու երջանկություն...

Ու կրձայնե մատուռն հստակ.
— Սա ծերունի ծառերուն տակ,
Այս քաղցրության մեջ բովանդակ
Քարանալո՜ւ երջանկություն...

(«Գիշերն իջավ»)

Ահա, նկատի ունենալով այս բոլորը, մեզ համար պարզ կլինի, թե որտեղից են առաջ գալիս Սևակի հոգու տրտմության և հուսահատության պահերը։ Պատասխանը պարզ է և մեկին։ Այս հոյակապ կյանքի և սխրագործ բնության մեջ, որի հանդեպ մեծ պաշտամունքով էր լցված իր հոգին, մշանջենապես ապրելու, անմահանալու, հավերժանալու անկարելիության դառն գիտակցությունից։ Եվ կյանքը որքան էլ հրապուրիչ է իր սխրաչի և հոգեպարար կողմերի մեջ, մահվան ենթակայությամբ ընկճում և խորտակում է նրա հոգին։ Ահա թե ինչու նա ուզում է անգիտանալ ամեն ինչ, մոռանալ կյանքն ու աշխարհը, ամեն փառք և ամեն ցավ օտար ու անկարեկից մնալով կյանքի բոլոր տրտունջներին և ցնծություններին։

Աննուրանա՜լ, անջել, վրսեմ, վե՜ս,
Երբալ անցա՜յգ, անա՜յգ երբալ վերջապես.
Աչքերը գոց՝ ցայգաշրջիկ խեղճին պես...

Զրգիտնալ, որ հոս իդեալը չիկա՜...
Ուխտագնա՜ց երբալ ափերն հեռակա,
Դեպի ուղին երջանկության մշտակա...

Երբա՜լ, երբա՜լ, չը հանչրնալ Մար՛ղ ու Աստվա՜ծ,
Զույգ երբալ՝ ձեռրդ ֆո՜ւյր ձեռրի մեջ դրրած
Անրրջանրի՜ն ու Սիրույն պես — ախսորվա՜ծ...»:
(«Երբալ»)

***

Անհրաժեշտ է անդրադառնալ արձակագիր Սևակի վաստակին։ 1913—1914 թվականներին Պոլսում հրատարակվող «Ակատամարտ» օրաթերթում նա ստորագրում է «Բժշկին դիրքեն վրցված էջեր» վերնագրի տակ մոտ տաս-տասնհինգ ակնարկ-պատմվածք, ստեղծելով մեր գրականության մեջ դեռ չփորձված մի ուրույն ժանր։ Այդ գրվածքների թեմաները վերցված են նրա անմիջական աշխատանքի շրջապատից՝ հիվանդներից և հիվանդանոցից։ Նրանցից յուրաքանչյուրը երեք-չորս այնպիսի լցնող մարդկային մարմնի ժանտ ախտերի և նրանցից բռնված հոգիների ողբերգություններ են։ Սևակն իր բժշկական գործունեության ընթացքում դեմ առ դեմ է եկել մարդկային ցավի, ինչպես նաև այն երկնող պատճառների հետ։ 19-րդ դարի քաղաքակրթությունը իր անկումների մեջ խոշոր վերքերով է պատում մարդու հոգին և ֆիզիկականը։ Լուսնոտություն, հյուծախտ և այլ հիվանդություններ հեղինակի դիտական հոգածության ենթակա իրողություններ մնալով հանդերձ՝ միաժամանակ նրա բարոյական մտահոգության առարկա են դառնում մասսաները լուսավորելու ցանկությամբ տոգորված։ Այստեղ

դրողի ստեղծումները բխում են օգտակար լինելու ձգտումից։ Ստեղծել ահ ու սարսափ մի շարք հիվանդությունների նկատմամբ, որոնք լուռ և անշշան սողոսկում են մարդու մարմնի մեջ և այնտեղ գործում ահավոր ավերածություններ։ Այսպիսով, այդ գրվածքներից յուրաքանչյուրը մարմնեղեն ցավից վարակված հոգու փոփոխակերպ տանջանքների պատմություններ են, ուր հաճույքի բուռն մղումներից իրենց դժբախտությունն են երկնում մարդիկ, հետո այն ողբալու համար մինչև իրենց կյանքի վերջին շունչը դրեթե։ Երիտասարդներ, չափահասներ, պատանիներ, և համարյա կյանքի բոլոր մեծ ու փոքր շրջանները ընդգրկող արարածներ ընկած են նրա բժշկի կլինիկան, այստեղից էլ նրա հոգու տիեզերական ցավի մեջ։ «Մի՛ շնար», «Կես խենթը», «Տեր ողորմյա», «Մեղքի տունը» ներկայացնում են միևնույն ախտից խփված մարդկանց ծանր ողբերգությունները։ Դրանք՝ բոլորն էլ անփորձ, պարզ, բարի մարդիկ են իրենց դավառացու միամտությամբ՝ մեղքի ոստաններից ճարված փտախտներից խառնահար, հեղինակի գրչի տակ մեզ պարզում են մարդկային հոգու սրտաճմլիկ պատկերներ։ Դրանց մեջ բացառիկ վիճակներ կամ հանդամանքներ չեն, որ հակադրում են իրենք իրենց հեղինակի նկատառմանը՝ բացառիկ մասնահատկությունների շահադրգռականությամբ, այլ հեղինակին զբաղեցնող

մարդկային ցավի երեսն է իր անհատակ խորությամբ: Սևակը այսահեղից առաջ է քաշում իր իդեականը, այն, որ բնությունից ստեղծված օրենքներ կան, որոնցից հեռու անցնել չի թույլատրվում մարդ արարածներին:

«Բժշկի գիրքեն վրցված էջեր»-ը մեզ խոսում է Սևակ արձակագրի և վիպագրի անուրանալի կարողության մասին: Այդ գրվածքները որպես մի առանձին ժանր, արժեքավոր ներդրում են, որոնք իրենց բովանդակությամբ, կառուցվածքով, հոդեբանական վերլուծությունների խորությամբ մեր արձակի պատմության մեջ դալիս են մի ուշադրավ տեղ գրավելու:

«Մի՛ շնար» պատմվածքը սկսում է ցնցիչ տողերով և ռումբի պես պայթում հանկարծ ընթերցողի առջև և փշաքաղում նրա ողջ մարմինը:

— Բժիշկ, ըսավ, զավակ չունենալու համար ճար մը, ճարակ մը չունի՞ս...:

Այդ սհավոր ու ոճրային հարցումից մի բոպե հետո հեղինակը սարսափած նայում է այցելու հիվանդի երեսին: Նա հարուստ ու պատկառելի արտաքինով մի մարդ է՝ ոսկի շղթայով, հաստ ձեռնափայտով, լավ սնած և ինքնագոհ մարդու երևույթի մեջ: Կերպարի արտաքին պատկերն ամբողջանում է, երբ հեղինակն ավելացնում է, թե նա «Իր գրպանին մեջ կամաց մը ձեռքով քանի մը արծաթներ հնչեցրուց»: Եվ սհա այս տարօրինակ

տիպի հագեցած, պարարտ տեսքը իր զավակ չունենալու ցանկության հակադրվելով՝ զորավոր կոնտրաստ է ստեղծում։ Այդ ժամանակ հեղինակը իր զայրույթն ու նողկանքը զսպել չկարողանալով՝ պոռթկում է.

— Ինչ, ըսի, թող անդին աղքատին զավակները տասնյակներով ծնին, չոր հացով մը մեծանան փողոցներուն մեջ, շան ձագերու պես, առանց բժշկի ու առանց կրթության, երբ փոքր՝ գերեզմանները լեցնեն, երբ մեծ՝ ձեր գործարաններն ու քսակները, ու դուք, որ ամեն դյուրություն ունիք առողջ, զարգացած, օգտակար անհատներ հասցնելու՝ եկեր եք զավակ չունենալու համար ճար ու ճարակ խնդրելու... դուք, որ ուժին ու ձեր տարիքին լիության մեջն եք, կայտառ, առողջ...

Բայց ահա արտաքնապես առողջ և կայտառ թվացող այդ մարդը ստուդապես խղճալի մի արարած է, որ իր մարմնի մեջ աշխարհի ամենասոսկալի հիվանդությունն է կրում, մի հիվանդություն, որ բոլոր ախտերը պարունակում է իր մեջ։ Գրվածքի հետագա ծավալումից, որ ընթանում է գործողությունների և դեպքերի աշխույժ պատմության վրա, պարզվում է, որ նա վարակված է անբուժելի հիվանդությամբ։

Եվ պատահական չէ, որ հեղինակը հաղարավորների մեջ ընտրում է խեղճ, բարի և տգետ մի մարդ, որպեսզի ցույց տա մեզ, թե անգիտությամբ

կատարված և տգիտությամբ ծածկված սոսկալի ախտը ինչ անսահման վնասների է հասցնում մարդուն։ Հոգով ու մարմնով ամբողջապես թունավորված՝ նա մահ է ցանում իր շուրջ բոլորը, իրենց արգանդին մեջ սպանում իր ապագա սերունդներին, որոնք աշխարհ չեն գալու։ Ահա դրա համար էլ հեղինակը ապդարարում է երբեմնի մարդարեության ահեղասաստ շեշտով, որ դատապարտում է բոլոր անասնական կրքերը, բոլոր վավաշոտ վայելքներն ու գաղտնի համբույրները։

— Մի՛ շնար...

«Կես խենթը» պատմվածքը հեղինակի վերոհիշյալ մտահոգության օրգանական շարունակությունն է, ինչպես միևնույն հորից առաջ եկած զավակը։ Սևակին հուզող խնդիրը այս անգամ ախտավարակ հորից ծնված զավակն է, որ անմեղ զոհն է հայրական մեղքի։ Այդ որդին մի դժբախտ արարած է, որի արյան բջիջների մեջ ժառանգաբար անցել է հնացած վարակը։ Սևակը գեղարվեստական պատումով, առանց սակայն գիտական փաստերի ավելորդ խճողումի, մեզ նկարագրում է ախտի հետևանքները։ Գրվածքի հերոսը իր կյանքը վերջացնում է դցելով իրեն մի ջրհորի մեջ, որպես անխուսափելի հետևանք այդ հիվանդության։

Գրվածքը ծավալվում է սուր դիտողություններով,

լարված դրությունների և հոգեբանական բարդ պրոցեսների վերլուծության հիման վրա։

Նկարագրելով իր հերոսի կյանքի անկարգ և անբնականոն հանգամանքները, Սևակը դրանց ամեն մի մոմենտից և անցքից մի տեսակ խորհրդավոր երկյուղ և միաժամանակ մի սուր կարեկցանք է ներշնչում ընթերցողին։ Կիսագիտակից և անհավասարակշիռ մի կյանքի մեջ կես-խենթը փչացրել է իր հարստությունը այլանդակ և հիմար դնումների մեջ։ Մի լուռ և անխոս տրաբերդություն է տիրում այդ մշուշոտ և աղոտ ուղեղի անպատասխանատու արարքների և կենցաղի ետին, երբ նա ստի և մեծամոլության երազանքներից տարված՝ դրանց հավատալու դժբախտության մեջ, իր հարստությունը մսխում է ծնողներից հեռու Մոնտե-Կառլոյի մութ և խուլ փողոցների մեջ, ինչպես դետի պղտոր ջրերի հոսանքին իր ձեռքի թանկարժեք իրը դցող երեխան։ Ահա նա երևակայում է իրեն ապագա թագավոր և իր բանակների համար ֆրանսիական մի մեծ գործարանի պատվեր է տալիս իշու լավագույն կաշուց թմբուկներ պատրաստել այնքան թվով, որքան էշ չկա աշխարհի երեսին։ Մի ուրիշ անգամ Գերմանիայի կայսրին իր ստորագրությամբ նամակ է ուղարկում նրա փոքր աղջկա հետ ամուսնանալու առաջարկով և ապա այդ ամուսնության արժանի պալատ ունենալու համար Մոնտե-Կառլոյի բարձունքների վրա մի

սքանչելի ապարանք գնելու ստորագրություն է տալիս։ Այլ առիթով, մի դիտնականի պատվիրում է արհեստական բրնձի դյուտի վրա աշխատել իր հաշվին։ Եվ այսպես անվերջ, մեկը մյուսից ավելի անբնական և զարմանահրաշ գնումներ, որ ախտավոր երևակայության մղումն է գործել տալիս։ Սևակը կամաց-կամաց ընթերցողին բերում, հասցնում է այն ահավոր դրդապատճառին, որի հետևանքներն են՝ հիվանդի հիշողության կորուստը, արարքների երեխայական տարօրինակությունը, մեծամոլությունը, խոսելու դժվարությունը, լեզվի և մատների դողալը։

Ժառանգական միևնույն ախտի տարբեր հետևանքը ներկայացնող մեկ ուրիշ սրտաճմլիկ գրվածք է «Տեր ողորմյա» պատմվածքը։ Այս անգամ Սևակը հրավիրում է մեզ ներկա լինել իր երեխաներին խեղանդամած հոր բարոյական տանջանքներին։ Պատմվածքն սկսում է գործողության մի արագ սկիզբով։ Վարպետ գրչի մի քանի ճարտար տողերով մեր առջև կենդանացրվում է գրվածքի անծանոթ հերոսը իր տարօրինակ կերպարանքի մեջ։ «Չերքե՞զ մը, անգետ ու անլեզու, ան ալ Եվրոպայի ճիշտ կենտրոնը... Անապատներեն շեղելով քաղաքի մը փողոցներուն մեջ թափառող առյուծ մը ավելի տարօրինակ չէր կրնար ըլլալ»։ Բացականչում է հեղինակը, և ահա գրքի տողերից վեր հառնելով նա շարժվում է մեր աչքերի

առջև իր հսկայի ահագին կերտվածքով, անընկճելի և հպարտ ուսերով, ամբողջ երեսը ծածկված թավ մորուքով, լայն ու անհատնում մի վերարկուի մեջ փաթաթված։ Իր երեք ձագուկների հետ նա Կովկասի անծանոթ և խուլ անկյունից գաղթելով եկել ընկել է Եվրոպայի քաղաքակրթության կենտրոնները, որպեսզի իր ցավին մի ճար, իր դարդին մի դարման գտնի։ Այս նախնական ծանոթությունից հետո հեղինակը տալիս է բուն սկզբնապատճառը։ Այս գողիաթը իր երիտասարդության շրջանին բանակի մեջ ֆրանկախտից է վարակվել։ Բայց տարիներով լռել ու գաղտնի է պահել բժիշկներից։ Հետո ամուսնացել է, և երեք զավակներ ունենալուց հետո կինը մեռել է քսան տարեկան դեռ չեղած՝ որբ թողնելով իր զավակներին։

Պատմվածքի այս առարկայական շրջանակից, որ գծագրվում է այս և հաջորդ տվյալների վրա, հեղինակն անցնում է հայրական հոգեվիճակի բացահայտմանը։

— Հապա ինչո՞ւ զավակներդ միասին բերիր,— հարց է տալիս բժիշկ հեղինակը։

— Իրենց համար եկա, բժիշկ... թող ես մեռնիմ, իմ կյանքս ի՞նչ... Ես մեղավոր հայր մըն եմ... բայց փոքրիկներս, բայց փոքրիկներս...

Սևակը նուրբ արվեստագետի վրձինով է նկարագրում մեղ մեղապարտ մարդու հոգեկան զար-

հուրագին մի դրամա։ Բառերն անզոր են արտահայտելու հայրական այս սոսկումը, ինքն իր մեջ ձգվող, դալարվող, կծկվող այն մեղավոր դիտակցության զղջումը, որ ամեն օր, ամեն րոպե հիշել է տալիս իրեն իր զավակների (երկու տղա և մեկ աղջիկ) ականջների խլացումը, որոնք ծանրանում են կապարի պես։ Մարդկային բոլոր միջոցներն անզոր են օգնելու նրանց։ Երեխաները խլանում են և սառած մումիաների տեսք ընդունում։ Նրանց դժբախտություն առթել է հայրը որ, փոխանակ երջանկություն տալու, պատուհասել է նրանց կյանքը։ Նրանք, կարծես, հավիտենական անեծքի պես ցցվում են իր՝ չարագործի աչքերի առջև, հիշեցնելու համար, թե ինքը, մի օր, տասնհինգ տարի առաջ... շնացել է մի տեղ... Ամեն ինչ անօգուտ է այլևս։ Ոչինչ չի փրկի։

«Սխալը անդամ մը գործվելե վերջ՝ անկարելի է սրբել։

Երիտասարդության սխալը միշտ ավելի պիտի կշռե նժարին մեջ» — ասում է Սևակը։ Եվ իրոք... Ապաժամ խղճահարություն, ուշացած զղջում, դժոխային ներքին տանջանքներ բավական չեն կատարված աղետը դարմանելու։ Եվ այս աշխարհում չկա խղճի խայթի և բարոյական լկումի ավելի ահավոր և սրտակեղեք պատկեր, քան մարդու իր իսկ ձեռքով անմեղ զավակների վրա բնության անողոք հարվածներին հանդիսատես լինելը։

— Աստված, աստված,— բացականչում է հայրը,— քու արյունեդ երեխաներ չունի՞ս դուն... մանուկներուն փշուր մը գութ չունի՞ս դուն...

Եվ վերջապես, Սևակը հոր բարոյական և հոգեբանական տանջանքի ուժեղագույն կողմերն ընդգծելու համար, ռեալիստական գույներով ցուցադրում է մեզ աղոթքի այն տեսարանը, որտեղ իրարու մոտ շարված երեխաները աղիողորմ օգնություն են հայցում երկնքից։

Ձայների այդ սարսռեցուցիչ ճլվլոցի մեջ լսվում է հոր կերկեր և ողբագին ձայնը, որն իր գործած մեղքի գիտակցության մեջ կրկնում է աղոթքի ծանոթ տողը՝

Մեղավորաց դարձ և զղջում։

Այս պատմվածների մեջ տիրող ողբերգությունը հեղինակը համարում է գոյություն ունեցող իրականության անհրաժեշտ հետևանք, բարոյազուրկ կարգերի այլանդակություններ, որոնք պալարոտ վերքի պես շրջապատել ու թունավորել են մարդու կյանքը։ Միայն մոլությունների հոգեբանական գործոնը դեր չունի այդ դժբախտությունների մեջ, որոնք հեղինակի ցույց տված օրինակներում արտահայտում են մարդկանց թուլությունից, անկամությունից, սխալանքից առաջացած տագնապը, այլ այստեղ դեր ունի միաժամանակ, այն էլ կարևոր դեր, հասարակական կարգերի

աղետը, որ մարդուն սպանում է իր բարոյական ըմբռնումների և գործնական կյանքի միջև գոյություն ունեցող աղաղակող հակասության ահավոր ճնշման տակ։ Եվ պատահական չէ, որ այդ կարգերից առավել տուժողները լինում են առավել չափով միամիտներն ու անփորձները, որոնք կապիտալիստական կարգի ու կենցաղի արտաքին պատիր և խաբուսիկ փայլից շլանալով՝ նետվում են նրանց ներսում թաքնված դարշահոտ կեղտի մեջ և խրվում մինչև իրենց կոկորդները։ Այդ իրականության խռոչավոր ու մահահոտ երեսը քողարկված է բարոյականության կեղծ ու խաբեբա հավատալիքների տակ։ Ահա այդ հասարակությունը քեզ տալիս է ազատ ասպարեզ մթության, խավարի, առանձնության մեջ խախտելու խղճի և բարոյականության բոլոր սահմանները, որպեսզի քեզ դատապարտի իսկույն «ամոթի և այպանքի» ամբաստանությամբ։ Այս տեսակետից բավական բնորոշ է «Մեղքի տունը» գրվածքը։ Տասնութ տարեկան պատանին հոր ձեռքով բերվում է Եվրոպա ուսանելու։ Նա իր հայրենի երկրի սարերի նման մի հսկա է, հեղինակի բառերով՝ «հաղթանդամ բան մը, Գողիաթին փայտե տաշված հսկա մը»։ Եվրոպայի ապականված մթնոլորտում «հսկա» այդ պատանին չի կարողանում դիմանալ իր հոգին գերող հրապույրների և մարմնական վայելքների փորձության, երբ մանավանդ «բաժակ մը դարձյալ

գինով Սողոմոնի արժանի կիներ կգտնվեին»։ Եվ ահա տասնութամյա պատանին «արդելված պտուղը» ճաշակելու իր առաջին իսկ փորձին ենթարկվում է քաղաքակիրթ Եվրոպայի անխուսափելի ախտին։ Ահա տեսարանը ներկայացնում է մեզ հիվանդ պատանուն բժշկի հետ նստած դեմառդեմ։ Սևակի արվեստագետ զգայարանքը, ինչպես միշտ, այստեղ էլ ճիշտ և զգուշավոր, կարողանում է բժշկական դիտական փաստերի վրա իր ղեկավար դերի հավասարակշռությունը պահպանել, այսինքն՝ բժշկին ենթարկել արվեստագետի տիրապետության և ահա սենյակը մտած հիվանդ պատանու հետ ունեցած իր սովորական զրույցից հանել գրական-գեղարվեստական մի լուրջ մտահղացում։ Նրա առջև կանգնած արարածը հիվանդ պատանին չէ, այլ հիվանդ պատանությունը՝ իր անհամարձակ, ամոթխած և անճարակ ձևերով, որն արևելքցու, հատկապես հայի հատկանշական գծերի մեջ ցոլացնում է ողբերգության յուրահատուկ երանգներ։ Ցավալի և հուզիչ են հետևյալ տողերը հիվանդ պատանության հոգեբանության մասին.

«Ես որքան շատ կսիրեմ այն բշվառները, որոնք իրենց ցավին ամբողջ գիտակցությունովը կուզան՝ նովեն հշված աշնան ոստի մը պես, բեզի փարելու ու խնդրելու որ ուժով մը բռնես զիրենք ու բող չտաս, որ ճողը իյնան...»։

Անմիջապես հետո, հեղինակի գլխավոր ձգտումի կողքին հիվանդ պատանության հարցը գրվածքի գլխավոր գաղափարին ստորադասվող ենթագաղափար է դառնում, որովհետև շուտով պատմվածքի բեմահարթակի վրա է գալիս հիվանդի հայրը բժշկի հետ խորհրդակցելու և հնարավորություն տալու նրան՝ բժիշկ-գրողի իր գաղափարներն արծարծելու։ Առաջին հարվածը Սևակը տալիս է ատոթի գաղափարին։ Վատ հասկացված ու սխալ գիտակցված՝ նեղ, մութ, այլամերժ, ինքն իր վրա կծկվող մի նենդաբույր նախապաշարմունք է դա, եթե վերջին վերադիր բառը ականջ չի ծակում, որ մի սարսափելի վտանգ է դառնում նման պարագային, եթե որևէ ախտ ծածկված մնալով իր շուտափույթ դարմանումը չգտնի։ Ահա հիմնական չարիքը, որի դեմ իր քննադատության նիզակն է ուղղում Սևակը։ Որովհետև այդ «ատոթը» որպես մի դավանանք նստել է մարդկանց ուղեղների վրա և կշռում, կշռադատում է նրանց յուրաքանչյուր քայլն ու մտածողությունը։ Դրա մեջ է և զավակի անձի ու դաստիարակության ողբերգությունը, և հոր գոյացրած սխալ գաղափարական աշխարհը, որի վրա կառուցել է նա ամբողջ իր կյանքը։ Այս վերջինս թեպետև ճարպիկ, գործունյա, խելացի մի մարդ, բայց որի միտքը քողարկվել է ամպերի հաստ շերտերի հետև մնացած արևի ճառագայթի պես «ատոթի» ավանդական ըմբռնումի

տակ։ Նրա համար, օրինակ, ամբողջ Եվրոպան արգահատելի մի երկրամաս էր, որի գիտությունն ու արվեստը փուչ են, և որի ազատամիտ կենցաղավարությունը այդ մարդու հիսուն տարվա պարկեշտությունն է խռովում։ Եվ վերջապես այդ մարդուկը չի կարողանում Եվրոպայում հանդիպած կյանքի արտաքին երևույթների մեջ թափանցել և նրա արժեքավոր միջուկը տեսնել։ Այս պատճառով էլ Եվրոպան իր համար մեղքի մի տուն է, որի վրա երկնքից կրակ է տեղում։

— Բժիշկ, եթե մեզ կարտոնեք,— ասում է պատանու հայրը,— ձագուկս առնեմ, երկիր դառնամ։ Փախչենք մեղքի քաղաքներեն. հոս երկինքեն հուր կտեղա, վարժվեր են ու չեն զդար... Կեսարին փողը՝ Կեսարին. մենք մեր լեռները դառնանք նորեն։

Սևակը որքան հմուտ բժիշկ, նույնքան և հմուտ հոգեբան է։ Նա ցույց է տալիս բարոյական վերքերը, որոնք բուն աղբյուրն են ֆիզիկական տանջանքների։ Նրանք ծայր աստիճան կառչել են ամոթի գաղափարին, որի հանդեպ ճիշտ պատկերացումը բացակայում է իրենց։ «Ա՜խ, ինչպե՞ս հասկացնի այս ծերունուն, որ ամոթալի հիվանդություն չկա, կեղծավորություն է ամոթը, ու տգիտությունն իսկ է այս դժբախտության պատճառը և ոչ թե նզոված գիտությունը» — բացականչում է հեղինակը։

Սևակի մոտ այս դաղափարական դիծը զարգանում է շոշափելով ժամանակաշրջանի բարոյական կապերի և փոխադարձ հարաբերությունների նաև այլ կողմերը։ Դեմոկրատ և հումանիստ գրողը անտարբեր չի կարող նայել կապիտալի դերիշխանության տակ հևացող ընտանեկան և ամուսնական կապերին, ինչպես և կնոջ տրիկական վիճակի հարցերին, սիրո առ ու ծախի առարկա լինելու հանգամանքներին և այլն։ Այդ բոլորը Սևակը դիտում է միշտ իր բժշկի կլինիկայի լուսամուտներից, այսինքն՝ միշտ հիվանդությունների առնչությամբ։ Այս տեսակետից, դեմոկրատական և առաջավոր հայացքների ուշադրավ արծարծումներ կան «Հարսներու դաղտնիքը», «Անիծված դանձը», «Փոխան հարսանիքի» պատմվածքներում։ Սևակն ավելի քան մեծ է իր այս գրվածքների դաղափարական բովանդակության մեջ, այն խիղճս ըմբոստացումների մեջ, որոնցով նա ծառանում է սերը, ամուսնությունը, ընտանեկան սուրբ և գարավոր կապերը վաճառքի վերածած անհոգի և կեղծ մարդկանց ընդդեմ։ Հոգեբանական շատ նուրբ պրպտումների վրա է կառուցած «Հարսներուն դաղտնիքը» վերնագրված գրվածքը։ Այր մարդկանց խաբեբայության և պայմանական բարոյականության կեղծ դիմակներից հիասթափված մի խոր ողբերգություն է ապրում Սյուզանը՝ քաղցը և քնքուշ զգացումներով տոգորված այդ աղ-

ջիկը։ Նրա մեջ հանկարծ պոռթկում է կինը իր սրտի մեջ կուտակված դառնությամբ, որ տղամարդկանց սանձարձակ իշխանության տակ անիրավված և միշտ լռելու հարկադրված անարդարությունն է պարտադրել նրան։ Կինը, որ տիրող կարգերի բարոյական ըմբռնումներով մի անշահ և էժանագին առարկա է.

«Հապա թող այրերը ամենազգվելի ախտերու մեջ նեխին, ամենազարշելի անկողիններու մեջ մտնեն, ու վստահ ըլլան, որ հիմենյան սուրբ բարձին վրա ամենամամուր կույսը պիտի ունենան... Կա՞ միակ աղջիկ մը, որ նույն վստահությունն ունենա իր ամուսնին վրա... Թող գոնե կույս մը գտնվի, որ մեր ամենուն վրեժը լուծե...»։

Սյուզանի շրթունքների վրա այս խոսքերը իր սեփական քրոջ դժբախտությամբ տանջվող հոգու ատելությունն են։ Իր քույրը երկար տարիների խնայողությամբ և զրկանքների գնով հավաքած դրամօժիտը գնում է մի վաճառականի ձեռքը և ամուսնանում նրա հետ։ Ահա առաջին իսկ գիշերը ետանում հրեշային ախտը... Այս իրողության առջև փշրվում է ծաղկանկար բաժակի նման հեգ աղջկա կույս հոգին։ Նա թշնամանում է մարդկանց և աշխարհի հետ։ Իր հարազատ քրոջ անձնական դժբախտությունը կործանում է իր անարատ հոգու սուրբ ու դյութական պատկերացումը սիրո և ամուսնության մասին և վիլուղում իր ոպատրանքների կախարդական դղյակը։ «Ախ, զզվելի, զազրելի

մարդիկ,— բացականչում է նա,— հոգով-մարմնով թունավորված... Ու խորհիլ, թե դուք, որ մեզի պես մոր մը շքեղ արգանդին մեջ կազմվեցաք... Ձեր առաջինն արժանի չէ հետի կնոջ համբույրին... Ես հարսերեն վարդագույն պատմություններ կուզեի ու խեղճերը չէին զորեր իմ կույս հույսերս խավարել...»։

«Անիծված դանձը» նմանապես մեկ ուրիշ կրկնակն է ծախու ամուսնության այլանդակ պատկերի, որտեղ ընտանեկան միությունը վերածվում է դրամական շահի կամ եկամտի։ Արմինեն միակ ժառանգորդն է իր հարուստ և ծերացած հոր, որի բոլոր զավակները մահացած են թոքախտից։

Արմինեին, որ նմանապես թոքախտավոր է, քսան տարեկան հաղիվ եղած՝ բռնում և նետում են մի ոգեստ և ստոր մարդու ձեռքը, առանց իր կամքը հարցնելու։ Այս ամուսնությունը, որ իրար վանող բևեռների մի բռնավոր միացում է, ստեղծել է մի ողբերգություն թշվառ աղջկա համար։ Նա բնազդով զգացել է և գիտի, տր իր «ամուսինը» համաձայնել է իրեն ոչ թե սիրուց, այլ մի օր տիրանալու իր հայրական ժառանգությանը։ «Կինը,— ասում է Սևակը,— աստվածային դիտություն մը անասնական բնազդ մը ունի ինչ որ չի դիտեր՝ կզգա և ինչ որ կզգա՝ իր ամբողջ հոգվույն ու մարմնույն մեջ կզգա...»։ Աղջիկը ոչ մի քնքուշ սեր և զգայուն սիրտ չի գտել իր կեղծավոր և հասկիտ մար-

դու մեջ, որը ստոիկյան պաղարյունությամբ չի վարանել տարիներով իր շրթունքները ենթարկելու կնոջ հիվանդության սոսկալի վարակման՝ նրա մահից հետո ոսկիներին տիրանալու համար։ Սևակը իր սրտի ողջ նվիրվածն է թափում ամուսնական նվիրական կապերի այդ սուրբ չարաշահման վրա, որ ոչինչ չունի սուրբ և պաշտելի։ Արդարև, մի ոժբախտ արարած՝ գիտակցելով իր դրությունը, ամբողջ մարդկությանը թունավորելու չափ դառնություն է կուտակել իր ներսում. «Ան կզվվեր իր ամուսինեն՝ որ չար հրեշտակի մը պես կժպտեր. կզվվեր նաև իր հորմեն, որ իր վեց զավակները թաղելե վերջը դեռ կապրեր ու կուլար...»։

Այսպես, բոլոր կեղծ ու բռնի ճարված ամուսնությունների մի տեսակ գաղափարական հակադրությունն է հանդիսանում «Փոխան հարսնիքի» վերնագրված պատմվածքը, որը հուզական և սրտաբուխ մի գործ է։ Անմեղության ու դեղեցկության վաճառք Ոսկի Հորթին, երբ ամուսնությունն ու պսակը խարդախ պայմանականության է վերածվում, որի մեջ «օրենքով» միացած երկու սեռերի ներկայացուցիչների փոխադարձ կապի մեջ սրբադործվում է կնոջ ստրկացումը տղամարդու բացարձակ և կամայական իշխանության։ Կնոջ դատի հարցը արվեստի լեզվով ավելի լավ չէր կարող պաշտպանվել, որքան այս պատմվածքի մեջ։ «Գերիներու վաճառականությունը ուրիշ

տեսակ չէր, միայն թե հիմա վաճառողն ալ, վաճառվողն ալ աղջիկն է...» ասում է Սևակը։ Նա իր նպատակի հիմնական մատնանշությանը հասնելու համար կենդանի պատկերների և խտացրած գույների միջոցով վերարտադրում է հարսանեկան մի արարողություն Պոլսի եկեղեցիներից մեկում, որն ուրիշ բան չէր, քայլ եթե ոչ՝ ամուսնացող աղջկա համար մահվան մի տեսարան, որ վիշտաղում է մարդու մարմինը։ «Ահա երևցավ ան,— նկարագրում է Սևակը հարսին,— շվարուն ու մահատիպ կառաջանար, առանց հոժարության, այլև առանց ընդդիմության, որովհետև ուրիշներ իր ճակատագիրը վճռած էին արդեն՝ առանց իր հավանությունը հարցնելու»։ Կնոջ վրա գործադրվող այս «օրինական» դահճագործության շարժառիթը հարստությունն է, որ իբրև չքմեղանք և արդարացում թալում է բոլոր անհավասարությունն ու պղծությունները։ Մեկ կողմից շվայտ, ղեխ և անբարո մարդու դիրքը նեռում է թռչնիկի պես անմեղ և դողդոջուն աղջկան, մյուս կողմից՝ կաշառում է հոգևորականին, եկեղեցին վերածում գերեվաճառության շուկայի և նույնիսկ ստիպում է աղջկա խաբված ծնողներին ուրախության ու հպարտության արցունքներ թափել։

Ամուսնական բոլոր ձևերի սնանկությունն ու հեղծավորությունը մատնանշելով, Սևակը ձգտում է ամուսնական բարձր և հիմնավոր կապերի, ո-

րոնք պետք է ստեղծվեն մարդկանց բացարձակ բարոյական կատարելության պայմաններում։ Երկու անձերն իրար միացնող ոչ մի պայմանական և նախօրոք հաստատված ձևեր չի ընդունում։ Ամուսնությունը, որ մարդկային հասարակության կարևորագույն խնդիրներից մեկն է, ձգտում է նա բարձրագույն միության վերածել։ Ըստ Սևակի, ամուսնությունը պայմանավորվում է սիրով միայն, և ընդունված կարգ ու կանոնի սահմանները չեն կարող ապահով երաշխիք լինել երջանիկ և համերաշխ կյանքի։ Ամուսնության հիմքը՝ սերը, փոխադարձ հարգանքը և հավասարությունը պարտադիր կանոններն են իրավականությունից վեր բարոյականության տեսակետից։ Սևակը համոզված է, որ բարձր հասարակության հիմքերը լավ ընտրված ամուսնական դաշինքներն են։ Եվ հետևաբար, նա ուզում է ամուսնական կապերն ազատել շահադիտական միացման անարդ պայմաններից և կամ դիպվածի պատահական մերձեցումներից, որպեսզի խնայվեն մարդկանց ընտանեկան կյանքի սրտաճմլիկ ողբերգությունները։ Եվ սրանից ուղիղ գծով կարելի է հետևեցնել, որ ամուսնությունը զգացումների, գաղափարների, մտածելաձևի, նախասիրության և ճաշակների համանմանության (չեմ ասում նույնության) միացումն է երկու հոգիների, որոնք ամուսնանալով երջանիկ կյանքի ապահովագրություն են անում։ Եվ մարդը

դրան պետք է հասնի բացարձակ ազնվության և բարոյական կատարելագործման ճանապարհով։ Դրանից դուրս կանխապես որոշված կապի իրավական ամեն մի ձև նսեմացնում և ստորացնում է նվիրական զգացումները և ամուսնությունը վերածում է «երկուսաթք ստորագրված վաճառականական պայմանագրության»։ Հեղինակն ինքը ավելի լավ է բնորոշում հետևյալ տողերում. «Ու սերը, տրուն համար Սողոման «Մահվան չափ զորավոր է» կրսե, առևտուրի մը չափ խախտուտ եղավ, որովհետև օրենքը, մեկ միացնելու ժամանակ՝ բաժանելու պայմաններն ալ կմատանաշեր»։

Այսպիսով, Սևակը շոշափում է կյանքի բազմաթիվ կարևորագույն հարցեր։ Ահա նա, որպես բժիշկ և գրող, իր կոչման հավատարիմ մնալու մատահոգության մեջ ծնունդ է տալիս «Գինովին աղջիկը» և «Տելիրում թրեմենս» պատմվածքներին։ Դրանցում հեղինակը ուշադրության առարկա է դարձնում ալկոհոլի վնասները։ Չպետք է մոռանալ, որ այդ պատմվածքները բխելով գրքի մայր ոգուց արժեք են ստանում այն հանրօգուտ ձգտումի մեջ, որով նա ուզում է վերահիշյալ մոլության հետևանքները պարզելով՝ շեղված մարդկանց նա կանդնեցնել և բերել իրենց կյանքի բնականոն ճանապարհի վրա։

«Բժշկին գիրքեն փրցված էջեր» գիրքը մի ուրույն և հետաքրքիր աշխարհ է բերում մեզ՝ ցավերի

և տանջանքների բազմազան տեսարաններով։ Մարմնական, հոգեկան, բարոյական բոլոր տեսակի վշտերը ընկած են Սևակի դրչի տակ, որոնց վրա դեմոկրատ և հումանիստ գրողը իր մաքի լուսավոր ճառագայթներն է սփռել դրանք վերացնելու մեծ մտահոգությամբ։ «Մեղքին պտուղը», «Ստամոքսի զոհը», «Ծավի միսը», «Թոքախտավորը» և դեռ շատեր, ֆիզիկական և բարոյական տառապանքների ուրիշ վկայություններ են, որոնք ըստ էության՝ վերոհիշյալ գրվածքների երկարաձգումը լինելու պատճառով չեն վերլուծվում այստեղ։

Բայց կարելի՞ է արդյոք անուշադրությամբ անցնել «Մանչերու դերեզմանը» պատմվածքի կողքով, որ իր կատարողական արվեստով մի դերազանց գործ է։ Տաշված և փայլուն քարերից կերտված մի հորինվածք է դա, որի վրա բեկբեկվող շողերի նման ցոլանում են հեղինակի մանկության անջինջ հիշատակները, մեր միտքն ու սիրտը լցնելով այն կարեկից և ափսոսալի ցավերով, որոնք ներշնչում են մեզ դեռահաս կյանքերի վաղաժամ մահերը։

Արամն է գրվածքի հերոսը՝ հեղինակի մանկության ընկերը։ Մի խոր կարոտով նա վերհիշում է «Հին-հին, օրհնյալ օրերի» թանկագին հիշատակները, որոնց շրջանակի մեջ դալիս է կանգնելու մանուկ օրերի իր պաշտելի ընկերը այնքան կենս-

գանի և իրական շարժումներով, տես կանաչ ա-
յտատավայրի մեջ կայտառող անհանգիստ գառը։
Մի քանի թվարկումներ անցած հիշատակներից,
մի քանի հատ գծեր միջավայրի և այդ հատակ-
ների հոգեբանության սրատարավ բարքերից, որոնց
մեջ առանձին պաշտամունքով ընդգծվում է դպրո-
ցական երկու դասակից ընկերների անկեղծ և
սրտագին կապը։ Եվ ահա կերպարը իր արտաքին
և ներքին, այսինքն՝ ֆիզիկական և հոգեկան ա-
ռանձնահատկություններով կերպարվում է, տր-
պեսզի մեր աչքերի առջև տողանցեն նրա խաղերի
և չարաճճիությունների շարանը, որի մեջ ուշա-
դրավ է նրա այն աննման քաջությունը, որով, այդ
հատակում, հերոսի վայել խիզախությամբ՝ ար-
համարհում է ամեն վտանգ, որոնք իրական և երև-
վակայական վախերից են ծնվում։ Բայց հեղինա-
կը այդ հերոս մանուկի մեջ, դեպի իր մտադրու-
թյունն ընթանալու ճանապարհին, շոշափում է մի
հիմնական հոգեբանական կողմ։ «Եվ սակայն այս
պատանին,—ասում է Սևակը,—որ անդղեր կլեռ-
ներ ու մանչերը կծեծեր, աղջիկներուն առջև ապու-
մը պես կդողար ու մեղավորի մը պես կկարմը-
ներ...»։ Եվ ահա բռնելով պատանիների հոգեբա-
նության այս թելը դեպքերի զարգացման մեջ,
ձգում է այն և բերում ու հասցնում այն վտան-
գավոր պրոբլեմին, որը հայտնի է մեր պատանի-
ներին գերեզման տանող փոսաերով։ «Արամ քա-

նի կմեծնար, այնքան կտկարանար։ Եկեղեցիին մեջ երգած ատեն ձայնը կփոխվեր. դպրոցի մեջ պատասխանած ատեն միտքը կխավարեր. գիրք մը կարդալու պահուն՝ էջը չդարձուցած՝ կարդացածը կմոռնար»։ Այս բոլորը նրա համար, որովհետև տարտամորեն մի փսփսուկ էր շրջում այն մասին, որ Արամը «ամոթ բաներ կըներ», «ողնածուծը հալել էր»։ Հեղինակը, այնուհետև տանում է իր հերոսին հյուծախտի աստիճանական քայքայման պրոցեսների միջից նրան հանձնելու դերեզմանի փոսին։

Այս թեման առաջին հայացքից գուցե և կյանքի մի սովորական երևույթ է թվում, բայց հեղինակի արվեստագետ գրչի տակ մարդկային ամենաազնիվ հույզերով, սրտի արյունով գրված կյանք և կենդանություն է ստացել։

Նմանապես մի շքեղ երկ է «Կռունկը», որ նպատակ ունի այս անգամ մեր ազգային ցավի երեսներից մեկը վեր հանել։ Հեղինակը իր հերոսի անձնավորության մեջ խտացնում է մեր ժողովրդի ճակատագրի դարավոր ցավը։ Եվրոպայում ուսումն ավարտած երիտասարդի մեջ թոքախտը տարիներ շարունակ դարանակալ սպասելուց հետո, նրա հայրենիք վերադառնալու դերագույն ժամին հանկարծ իր գլուխն է ցցում և հարվածում նրան։ Լքումի, մենակության և որբության շարքաշ ու մռայլ տեսարանների մեջ է դրել Սևակը

հայ երիտասարդին, որպեսզի նրա մեջ դիտի վառ երաշներով հզի կործանվող մարդու հոգին, իր անսահման ողբերգությամբ։

Ահա այդ գիրքը բոլոր այս հիվանդներից ու հիվանդություններից կազմված զանազանակերպ տանջանքների մի մղձավանջային աշխարհ է, որի մեջ թաղվում է ընթերցողի հոգին, բայց չի խեղդվում, շնչում է այդ օդից, բայց չի թունավորվում, այլ փորձառության և իմաստության զենքերով զրահապնդված դուրս է գալիս այնտեղից։ Որովհետև Սեակը բոլոր այդ ցավատանջ տեսարանների վրա իր հոգու կենսատու ճառագայթներն է պատեցնում։ Նկատելի մի պարադոքս է այն, որ՝ ի հակադրություն իր նախորդ ստեղծագործություններին, որոնց հոգեաշխարհի վրա մահվան հուսահատությունը ծանրածանր ճնշումով թավալվում է, այստեղ սակայն, ցավի թագավորության մեջ, ապրելու և հաղթանակելու կորովի կամքն է արտացոլվում։ «Ապրելը հաղթել է» և «Նաբոլեոնի մահը» սկնարկներում մեծ հոգիների հատուկ լավատեսությամբ ցավերը դիմադրավելու պայքարն է թելադրում փոխադարձ օգնության հիմունքների վրա։ Եվ հեղինակը հիվանդությունից ցավագար մարդկանց շրթներին կաթեցնում է սփոփանքը մեռնողի քաղցրությամբ.

«Բոլոր երկրներու ախտավորներ, իրարու միա-

ցեք, ձեռք-ձեռքի տվեք, կազմակերպեցեք մեծ հաղթության, կյանքի հաղթության համար...

Հառաջ. ապրիլը հաղթել է...»:

Իսկ «Նաբոլեոնի մահը» դրվածքում այդ գաղափարը իր վերջնական ձևակերպման մեջ է. «Այն հիվանդները, որոնք փոքրիկ ցավն մը կհուսահատվին, թող դիտնան, տե այս աղքատիկ դյուղացիին զավակը, այս նիհար ու պանդուխտ զինվորը, որ համամարդկային քաղաքակրթությանը հրամայեց, աշխարհին տիրապետելն ավելի իր անձին տիրապետեր էր... Այս փոքրիկ մարդը իր վրա կմիացներ բժշկության մեծագույն հիվանդությունները. իր ուղեղը լուսնոտ էր, իր սիրտը պզտիկ, իր կուրծքը թոքախտ, իր ստամոքսը քաղցկեղ...

Խոսելով Սևակի արձակ դրվածքների մասին, ժամանակակից նշանավոր արձակագիր և հրապարակախոս Ռուբեն Զարդարյանը գրել է. «Շնորհավորություններս այն ոմայլելի ձևին համար, որով կդրեք ձեր բժիշկի էջերը: Չեք կարող երևակայել, թե որպիսի խանդավառ ընդունելություն գտած են անոնք ընթերցող հասարակության մեջ, թե հոս, թե արտասահման: Ասիկա նախ՝ կապացուցանե այն անտարակուսելի դրական ճարտարությունը, որով կդրեք ձեր հոդվածները քերթվածի մը չափ

թրթռուն, երկրորդ՝ մանկավարժական այն մեթոդը, որով հիվանդությանց սարսափն ու գարշանքը կներշնչեք, առանց խրատի ու քարոզության հին պանալ մեթոդին, և երրորդ՝ այն, որ ասիսոն, այնքան տառապանք կա մեր ծոցն ալ ու այնքան հիվանդ, այնքան վիրավոր»։

Այսպիսով, Ռուբեն Սևակի արձակ գրվածքները իրենց դրական-ստեղծագործական ժառանգության վրա ավելացնում են մեկ ուրիշ արժեքավոր երես։ «Բժշկին դիրքեն փրցված էջեր» գրքի մեջ ամփոփված գրվածքները սիրուն պատմվածքներ են։ Դրանց հոգեհատակը միշտ բանաստեղծական հշմարիտ զգացողությունն է, որ կենդանություն և ջերմություն է հաղորդել այդ գրվածքներին։ Դրանց մեջ հանդես է գալիս մարդու հոգեբանության պրպտողն ու ուսումնասիրողը։ Մարմնական ցավի ազդեցությամբ առաջացած հոգեկան ողբերգություններ են նրա մտահոգության առարկան, և մենք լցվում ենք և՛ հերոսների ախտի երկյուղով, և՛ հոգեկան ահավոր դրամայով։ Այդ գրվածքների թեմաները, որոնք նպատակ ունեն գիտական երևույթները բացատրել, կարող էին սոսկական չոր փաստերի արձանագրության վտանգը ներկայացնել, եթե Սևակ արվեստագետի խառնվածքն ու հաշակը չփրկեին դրանք։ Արդ, այդ պատմվածքները սեղմ, արագ, շարժուն գրվածքներ են, ավելորդություններից զերծ, անշահ մանրամասնու-

թյուններից հեռու։ Հեղինակը չի տարածվում նյութի վրա, չի ծամծմում այն, այլ հավատարիմ մնալով իր մտահղացման գլխավոր նպատակադրումին՝ հանդես է բերում խոսքի և բառերի հանդեպ զգույշ և ժուժկալ վերաբերմունք։ Ահա թե ինչ է գրում ժամանակի դրական դեմքերից մեկը՝ Ալփիարը, Սևակի այս գրվածքների մասին։

Զգացումներու փափկազգաց նկարիչ մը լեզվի ciseleur մը և բառին ամբողջ ուժովը՝ հաճելի գրագետ մը՝ գրական նոր նյութ մը կստեղծեմ, որուն վրա ինքացողներեն մեկը ներեցեմ որ ես ըլլամ»։

Կյանքի սիրով և ապրելու խանդավառությամբ այնքան լեցուն այս բանաստեղծ-արձակագիրը ինքն իրեն դեռ չիրագործած ընկալ կես ճանապարհին։ Այժմ, Սևակի՝ որպես ժամանակի հումանիստ մտածողի և առաջավոր մարդու՝ սրտի կարոտներն ու սերերը մերն են լինում, սովետական ժողովրդինը, համայն մարդկության հանդիստ և խաղաղություն բերելու իր սրբազան առաքելության մեջ։

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԻՆ ԴԻՍԵՆՏԱԼ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

Խմբագիր՝ Ս. Տարոնցի
Նկարիչ՝ Ա. Դասպարյան
Գեղ. խմբագիր՝ Ռ. Բեդրոսով
Տեխ. խմբագիր՝ Վ. Գալստյան
Վերստուգող սրբագրիչ՝ Ա. Բիշոյան

ՎՖ 03865 Պատվեր 672։ Տիրաժ 3000։

Հանձնված է արտադրության 1/XII 1958 թ.։
Ստորագրված է տպագրության 25/IV 1959 թ.։
Թուղթը 70×92 1/32։ Տպագր. 2,75 մամ.=3,22 պայմ. մամ.,
հրատ. 2,5 մամ.։
Գինը՝ 1 ռ։

ՀՍՍՌ Կուլտուրայի մինիստրության Հրատարակչություն-
ների և պոլիգրաֆ արդյունաբերության Գլխավոր
վարչության № 6 տպարան, Երևան,
Լենինի պողոտա № 51։

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0033875

ԳԻՆԸ 1 Ռ.

A I/108